

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Ֆրանսա-Հայաստան Յարաբերութիւնները Կը Թեւակոխեն Նոր Նշաձող

Վերջին օրերուն արձանագրուեցան բազմաթիւ զարգացումներ, որոնց առաջնը կը կազմէին Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ սերտացող յարաբերութիւնները, յատկապէս ռազմական ոլորտէն ներս: Հայաստանի վարչապետի Փարիզ այցելութիւնը, նախագահ Մաքրոնի յայտարարութիւնները, Միսաք եւ Սելինէ Մանուշեաններու աճիւնները Ֆրանսայի մեծագոյն գործիչներու Պանթոնին մէջ ամփոփելու արարողութիւնը ու ասոնց անմիջապէս յաջորդող Ֆրանսայի պաշտպանութեան նախարարի այցելութիւնը Երեւան չվրիպեցան նոյնիսկ միջազգային մամուլի ուշադրութեան: Խօսուեալ էր Ամերիկեան «Politico» հեղինակաւոր հրատարակութեան՝ «Ֆրանսան դրօշակ կը տնկէ Ռուսաստանի ետնաբակին մէջ» խորագիրը կրող յօդուածը, որ կու գար ըսելու թէ Հայաստանին զէնք վաճառելով Ֆրանսան ոչ միայն կը զայրացնէ Ատրպէյճանին, այլեւ Ռուսաստանին:

Այս բոլորին վրայ եկաւ աւելցուցիչ Նիկոլ Փաշինեանի «France 24»-ին տուած հարցազրոյցը, որուն ընթացքին Հայաստանի վարչապետը առաջին անգամ ըլլալով հրապարակաւ յայտարարեց, որ գործնականին մէջ սանձադրուած է Երեւանի մասնակցութիւնը ՀԱՊԿ-ի կազմակերպութիւններուն մէջ: Վերջին ամիսներուն Հայաստան կը մերժէր իր մասնակցութիւնը բերել Մոսկուայի կողմէ ղեկավարուող ռազմական դաշինքի միջոցառումներուն, մեղադրելով զայն իր պայմանագրային պարտաւորութիւնները չկատարելու մէջ:

Ե՛ւ Փարիզի մէջ՝ նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ Երեւանի մէջ՝ զինուած ուժերու նախարար Սեպասթիան Լըքորնիո յայտարարեցին իրենց յանձնարարութիւնը՝ պաշտպանելու Հայաստանի ինքնիշխանութիւնն ու հողային ամբողջականութիւնը: «Հայաստանը եւ Եւրոմիութիւնը կը ցանկանան նոր գործընկերութեան ժամանակացոյց: Բառերէն այն կողմ Ֆրանսան Հայաստանի կողքին է, որովհետեւ արդարութիւնը, արդարադատութիւնը, ազատութիւնը եւ միջազգային իրաւունքը մեզի համար կարեւոր են»,- յայտարարեց Ֆրանսայի նախագահը: Իսկ, նախարար Լըքորնիո Երեւանի մէջ ըսաւ, «Եթէ Հայաստանը կարիք

Եթէ Հայաստանը Կարիք Ունենայ, Հեռահար Հրթիռներ Եւ Պիտի Ըլլան Ձեր Տրամադրութեան Տակ. Յայտարարեց Ֆրանսայի Պաշտպանութեան Նախարարը

Երեւան այցի ընթացքին կաշաքած մամուլի ասուլիսի ժամանակ Ֆրանսայի զինուած ուժերու նախարար Սեպասթիան Լըքորնիոն յայտարարեց, որ իր երկիրը պատրաստ է Հայաստանին տրամադրելու անոր պահանջներուն համապատասխան զինատեսակներ: «Նախօրէին դուք արդէն առաջին խմբաքանակը ստացաք զինամթերքի եւ շուտով Պասթիոն գրահամեքենաներու խմբաքանակը եւս Հայաստանի մէջ պիտի ըլլայ: Ես շատ չխորանամ, թէ ինչ սարքաւորումներ պիտի գան, բայց բոլորը պաշտպանութեան նշանակութեան սարքաւորումներ են, որովհետեւ այս տարածաշրջանին մէջ առաջնահերթ է բնկաշուութեան եւ սահմաններու պաշտպանութիւնը»,- ըսաւ Սեպասթիան Լըքորնիոն:

Ֆրանսայի պաշտպանութեան նախարարը աւելցուց, որ ոեւէ մէկը չի կրնար քննադատել Հայաստանի բանակը իր պաշտպանութեան ունկութիւնները բարձրացնելու եւ ուժեղացնելու համար. «հակառակը պաշտպանութեան մասին ըսեմ, որ եթէ Հայաստանը կարիք ունենայ, ապա կարճ, միջին եւ այլ հեռաւորութեամբ հրթիռները եւս պիտի ըլլան ձեր տրամադրութեան տակ»:

Մեծարանքի Շքեղ Հանդիսութեամբ Հոյլ Սը Ընկերներ Պարգևատրուեցան «Փարամագ» Շքանշանով



Պարգևատրուած ընկերները ՍԴՀԿ Կեդրոնական Վրչութեան անդամներուն հետ

Անցնող շաբաթավերջին՝ 24 փետրուար 2024, Փասատինայի ՀԿԲՄ-ի սրահէն ներս տեղի ունեցած մեծարանքի շքեղ ճաշկերոյթ-հանդիսութեան մը ընթացքին ՍԴՀԿ-ի Հնչակեան Կուսակցութեան խումբ մը անդամներ պարգևատրուեցան «Փարամագի» անուան շքանշանով: Ներկայ էին միջոցառման հովանաւոր՝ ՍԴՀԿ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան,



Սեպասթիան Լըքորնիո եւ Սուրէն Պապիկեան միատեղ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

մադրութեան տակ»:

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանի հետ համատեղ ասուլիսին ընթացքին, Ֆրանսայի պաշտպանութեան նախարարը պատասխանելով լրագրողներու հարցումներուն՝ ըսաւ, որ Ֆրանսայի նախագահի որոշումներն մէկն է մշակելի Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան: «Այս պահուն առաջնա-

հերթութիւնը սպառազինութիւն ձեռք բերելն է եւ վերապատրաստումը այդ ամէնը կիրառելու համար», ըսաւ ան եւ յաւելեց, թէ անոր համար շարք մը փաստաթուղթեր ստորագրուեցան:

«Չենք կրնար ի հարկէ խօսիլ սահմաններու պաշտպանութեան մասին առանց որոշակի վերահսկողութեան»:

Շար.ը էջ 5

Փաշինեան Կը Յայտարարէ՝ ՀԱՊԿ-ին Անդամակցութիւնը, Ըստ Էութեան, Սառեցուած Է



«France 24»-ին տուած հարցազրոյցին մէջ Նիկոլ Փաշինեան կրկին քննադատած է Ռուսաստանի առաջնորդած ռազմական դաշինքը՝ պայմանագրային պարտաւորութիւնները չկատարելու համար:

«ՀԱՊԿ-ը, մեր գնահատմամբ, չի կատարել անվտանգային ոլորտի պարտաւորութիւնները Հայաստանի նկատմամբ, մասնաւորապէս 2021, 2022 թուականներին, եւ դա չէր կարող մեզ համար անցնել առանց հետեւանքների: Այդ

Շար.ը էջ 7

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռուսները եկել էին Ջայ «Փորձագետներին» Ինստրուկտաժ Անելու

ՎՈՎԱ ՅԱՎՈՐԵԱՆ

«Հայաստանը խաչմերուկում. ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ԹՀՊ արտադաշինքային կարգավիճակ» թեմայով քննարկում տեղի ունեցավ Երևանում, որին մասնակցում էին ռուս և հայ քաղաքագետներ, վերլուծաբաններ: Ռուսները եկել էին մեզ բացատրելու, թե որն է Հայաստանի շահը, նաև սպառնում էին՝ ինչ կը լինի, եթե Հայաստանը երես թեքի Ռուսաստանից: Դժուար է պատկերացնել, որ այս քննարկման հասցեատեղը ՀՀ կառավարութիւնն էր, որը որոշում կայացնողն է՝ երես թեքելու ՌԴ-ից, թե՛ ոչ, համագործակցել Արեւմուտքի հետ, թե՛ ոչ: Կամ դժուար է պատկերացնել, որ կառավարութիւնում նայելու էին իրենց քաղաքականութիւնը... «դէ որ Սուսլովն ասում ա, բերքը իր ասածով անենք, ուրեմն մի բան գիտի» սկզբունքով:

Իսկ ի՞նչ էր ասում Սուսլովը: Բացման իր տեքստում կանխատեսեց, որ ռուս-ուկրաինական պատերազմը դեռ երկար կը շարունակուի, իսկ այդ ընթացքում եւ դրանից յետոյ ՌԴ-ի ու Արեւմուտքի հակամարտութիւնը, առճակատումը, թշնամանքը չի թուլանայ, ընդհակառակը՝ աւելի կը սրուի, հետեւաբար Արեւմուտքը կը ձգտի Ռուսաստանի ազդեցութեան տակ գտնուող բոլոր տարածաշրջաններում պայքարել ՌԴ-ի դէմ, այդ թւում՝ Հարավային Կովկասում եւ Կեդրոնական Ասիայում: Ու խորհուրդ է տալիս Սուսլովը՝ այդ

տարածաշրջանի, մասնաւորապէս ՀԱՊԿ անդամ երկրները պէտք է բալանս պահեն՝ պահպանեն գործընկերային յարաբերութիւնները ՌԴ-ի հետ, միեւնոյն ժամանակ Ուկրաինայի հարցում չանցնել ՌԴ-ի կողմը, նաև՝ չանցնել Արեւմուտքի կողմը՝ ընդդէմ ՌԴ-ի, քանի որ դրա հետեւանքը կը լինի այն, որ այդ երկիրը առաւելագոյնը կը կորցնի պետականութիւնը, նուազագոյնը՝ տարածքային ամբողջականութիւնը:

Ըստ հոլթեան, Դմիտրի Սուսլովն ասում է, որ Ռուսաստանը ռազմական ճանապարհով կը պատժի այդ երկրներին: Եւ ահա, ըստ Սուսլովի, Հայաստանը գնում է այդ ճանապարհով: Ասում է, թե դէպի Արեւմուտք գնալը թանկ գին կ'ունենայ, որը Հայաստանն արդէն իսկ վճարում է: «Առաջին հերթին դա Ղարաբաղն է, որը ռուսական տեսանկիւնից այն գնի մասն է, որը Հայաստանն արդէն վճարել է, եւ Ղարաբաղի ամբողջական կորուստը ուղեկցող վնաս էր, որը Հայաստանը կրում է դէպի Արեւմուտք դիրքաւորուելու դիմաց», - ասում է Դմիտրի Սուսլովը:

Հարց է առաջանում՝ 2020 թուականին Ռուսաստան-Արեւմուտք առճակատումը, թշնամութիւնը այսպիսին չէր, բացի դրանից՝ Հայաստանը որեւէ քայլ չէր արել դէպի Արեւմուտք, զուցէ մտքին անգամ չկար, «ռուսական տեսանկիւնը» ինչո՞ւ է Հայաստանին պատժել 2020-ին: Կամ 2022 թուականի Փետրուարից յետոյ, երբ

Ռուսաստանը այլեւս գէնք չվաճառեց Հայաստանին, ըստ հոլթեան անարձագանք թողեց Երեւանի դիմումները, երբ վերջինիս նկատմամբ ռազմական ագրեսիա էր կատարուել, ի՞նչ պէտք է աներ Հայաստանը: Նստէր սպասէր, թե՛ երբ կ'աւարտուի Ուկրաինայի հետ պատերազմը: Առաւել եւս, որ, ինչպէս ասում է Սուսլովը, այն դեռ երկար կը տեւի: Եւ հիմա նորից հարց՝ ո՞վ է վեկտոր փոխել՝ Հայաստանը, թե՛ Ռուսաստանը՝ շրջուելով դէպի Թուրքիա եւ Ատրպէյճան: Կամ ռուս վերլուծաբանները առաջարկում են, որ Հայաստանը ի՞նչ աներ, ինչպէ՞ս ապահովել իր անվտանգութիւնը, երբ իր ռազմավարական գործընկերն անգամ պայմանագրով վաճառուած գէնքը չէր առաքում: Ռուսաստանն է ստիպել Հայաստանին վեկտոր փոխել եւ հիմա պատժու՞մ է դրա համար:

Պարզ է, որ հանդիպումքննարկման նպատակը քարոզչական էր եւ կարծիքների համադրութիւնը: Ռուսները եկել էին տեղի, այսպէս կոչուած, որոշ վերլուծաբաններին ինստրուկտաժ անելու, թե՛ տաղաւարից տաղաւար գնալով որ հարցին ինչ պատասխան պէտք է տան: Դա ախլայատ է դառնում նաև հայ վերլուծաբանների՝ ռուսներին երկրորդելուց, ներկայ գտնուող վերլուծաբաններից միայն Ալեքսանդր Իսկանդարեանն էր, որ իրօք հայկական տեսակէտն էր ներկայացնում: Ծիծաղելի (իրականում նողկալի) այն է, որ հարցերին պատասխանողի դերում էր

նաև Արթուր Խաչիկեանը, որն իբր պէտք է հարցերին անդրադառնար արդէն Հայաստանի տեսանկիւնից, սակայն Խաչիկեանը վերցրեց ու ասաց, որ համաձայն է Սուսլովի հնչեցրած գրեթէ բոլոր թէգերի հետ, որ Սուսլովը ներկայացրեց այն, ինչ ինքն էր ուզում ասել: Խաչիկեանը, օրինակ, «չի հասկանում», «չի տեղաւորում» ստեղծուած իրավիճակում Հայաստանի դիրքաւորումները հետ, բայց, օրինակ, լրիւ հաշտ է, իր համար ամբողջութեամբ հասկանալի ու ընդունելի է ռուս-թուրքական համագործակցութիւնը: Ձեռքի հետ էլ ցաւում է, որ Թուրքիան որոշակի պայմանաւորուածութիւններ չի կատարում ու, օրինակ, թոյլ է տալիս Ֆինլանտիային ու Շուեդիին անդամակցել ՆԱՏՕ-ին:

Սուսլովն ասում է, թե՛ Ռուսաստանը քանի դեռ պատերազմի մէջ է Ուկրաինայի հետ եւ քանի դեռ ՀՀ-ն ՀԱՊԿ անդամ է, ռազմական ուժ չի կիրառի, բայց Հայաստանի այս քաղաքականութեան շարունակութեան դէպքում կը գտնուեն երկրներ, որ դա կ'անեն, ու նշում է Ատրպէյճանի ու Թուրքիայի անունները: Կրկին հարց՝ իսկ ինչո՞ւ պէտք է Թուրքիան ու Ատրպէյճանը Հայաստանի արեւմտամէտ քաղաքականութեան պատճառով ռազմական ուժ կիրառեն Հայաստանի վրայ: Գուցէ որովհետեւ դա կարող են անել իրենց դաշնակից Ռուսաստանի՞ ինդրանքով: Ատրպէյճանը, Իհարկէ, կարող

Շար.ը էջ 17

Ինչու «Ալիեւի Որսորդը» Ուղարկուեց Ատրպէյճան. Ինչպէս «Կը Փոխհատուցուի» Փութին Այս Ժեստը

ՅԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Ալիեւի որսորդը» մականունը կրող, Հայաստանի կողմից հետախուզուող, Ռուսաստանի «Դոմոդեդով» օդանավայանում ձերբակալուած ատրպէյճանցի ֆիթնես մարզիչ, բլոգեր Քամիլ Ձեյնալիին դաշնակից երկիրը որոշեց ոչ թէ արտայանձնել ՀՀ-ին, այլ՝ առօքփառօք վերադարձնել Պաքուին:

Ձերբակալուած ատրպէյճանցին, ինչպէս նոյն օրը յայտնել էր նրա փաստաբան Ալեքսանդր Գարաեւը, ազատ էր արձակուել «Ատրպէյճանի դիւանագիտական ներկայացուցչութեան աջակցութեամբ»: Սա նշանակում է, որ արտայանձնման գործընթացը, որպէս միջպետական պրոցեդուրա, դուրս է եկել իրաւական մակարդակից եւ լուծուել քաղաքական՝ դիւանագիտական մակարդակով: Այլ կերպ ասած՝ ատրպէյճանցուն բռնել են, յետոյ «վերեւների» հետ պայմանաւորուել ու բաց թողել:

Նշենք, որ, ըստ «Յանձնման մասին» եւրոպական կոնվենցիայի, տուեալ պետութիւնը կարող է պահանջել տուեալ անձի յանձնումը (էքստրադիցիան) այն պետութեան իրաւասու մարմիններից, որի տարածքում յայտնաբերուել է չիճեալ անձը: Այդուհանդերձ, յանձնումը պէտք է կատարուի այնպիսի յանցագործութիւնների դէպքում, որոնք հայցող եւ հայցուող կողմերի (այսինքն՝ ե՛ւ այն պետութեան, որի իրաւասու մարմինները գործ են յարուցել, ե՛ւ այն պետութեան, որի տարածքում յայտնաբերուել է յանցագործութիւն կա-

տարած անձը) օրէնքներով պատժուում են ազատագրմամբ կամ կալանքով՝ նուազագոյնը մէկ տարի կամ աւելի ժամկէտով կամ աւելի խիստ պատժով:

Արդ, ինչո՞ւ դաշնակից երկիրը որոշեց մարդկայնութեան դէմ յանցագործութեան համար մեղադրուողին ՀՀ-ին արտայանձնելու փոխարէն նպաստել վերջինիս հերոսացմանը՝ «սաֆարովացման»-ը եւ այս քայլով վերաթարմացնել այդ երկրում տիրող հայտնեացութիւնը:

Դատելով ատրպէյճանական ԶԼՄ-ներից՝ Պաքուում Ձեյնալիին դիմաւորել եւ յարգանքի տուրք են մատուցել նոյն ոգեղենութեամբ, ինչպէս որ հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած ստահակին՝ Ռամիլ Սաֆարովին տարիներ առաջ Հոնոլուլուի կողմից Ատրպէյճանին արտայանձնումից յետոյ:

Չի բացառուում, որ առաջիկայ օրերին Ատրպէյճանում ծնուող երեխաներին անուանակոչեն սոյն բլոգերի անունով եւ պետական մակարդակով պատուոյ հարթակին կանգնեցուի հերթական հայասպանը:

Ձեյնալիին արտայանձնելու համատեքստում շատ կարեւոր է դիտարկել նաև այն հանգամանքը, թէ՛ ինչ յանցագործութիւնների համար է մեղադրուում վերջինս եւ ինչ ժամանակաշրջանում կատարուած:

Նա մասնաւորապէս մեղադրուում է 44-օրեայ պատերազմի ժամանակ ԼՂ Հաղորդ Քաղաքի երկու քաղաքացու գլխատուելու համար, ինչի մասին վկայող տեսանիւթը, ի դէպ, հենց ինքն է գետեղել համացանցում:

Սոյն յանցանքները կատարուելու համար մեղադրուող երկիրը, փաստօրէն, կա՛մ պէտք է իր ներսում պատասխանատուութեան ենթարկել Ձեյնալիին, կա՛մ էլ արտայանձնել երրորդ երկրի՝ ՀՀ-ին՝ միջազգային հնչողութիւն հաղորդելով Ատրպէյճանի քաղաքացու կատարած ենթադրեալ յանցագործութիւններին՝ կեդրոնացնելով աշխարհի ուշադրութիւնը ՀՀ-ի շուրջ: ՀՀ-Ատրպէյճան յարաբերութիւնների կարգաւորման գործում իրեն միջնորդ դիտարկող երկիրը մինչդեռ նախընտրեց երրորդ՝ ակնյայտ քաղաքական ուղիք՝ պարունակող տարբերակը՝ նախ ցուցադրաբար ձերբակալեց ենթադրեալ յանցագործին, ծանուցեց այդ մասին ՀՀ պատկան մարմիններին, ապա առանց միջպետական իրաւական ընթացակարգերը պահպանելու յանձնեց Ատրպէյճանին:

Չի բացառուում, որ ՌԴ-ի այս ցուցադրական ակտը ՀՀ-ից «վրէժ» լուծելու իւրօրինակ գործընթաց է՝

Շար.ը էջ 17

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՇՎԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱԶԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Ըստ ԱԺ Նախագահին՝ Ծիշդ Պիտի Ըլլայ Ռուս Սահմանապահներու Դուրս Գալը «Զուարթնոց» Օդակայանէն

ՀՀ Ազգային ժողովի նախագահը կը կարծէ, որ Ծիշդ պիտի ըլլայ՝ ուստի սահմանապահները դուրս գան «Զուարթնոց» միջազգային օդակայանէն: Իսկ արդեօք այդ հարցը իշխանութեան օրակարգին վրայ է, Ալէն Սիմոնեան ըսաւ, թէ ինք անձամբ նման քննարկման չէ մասնակցած:



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

«Կարող է իրաւապահները կամ համապատասխան մարմինները հետ քննարկուել է, բայց ես կարծում եմ. որովհետեւ մենք մեր երկրի սահմանները կը պաշտպանենք, իսկ ես վստահ չեմ, որ իրենք մեր երկրի սահմանները կը պաշտպանեն, դուք վստահ էք», ըսաւ ան:

Ռուս սահմանապահները օդակայանին մէջ երեք տասնամեակէ աւելի է ծառայութիւն կ'իրականացնեն: Թէ Ծիշդ ինչ իրաւական հիմքով, յստակ չէ: Հայաստանի տարածքին անոնց գործունէութիւնը կը կարգաւորուի 1992 թուականին Մոսկուայի հետ կնքուած պայմանագրով, որուն մէջ, սակայն, խօսք չկայ «Զուարթնոց»-ին մէջ ներկայութեան մասին: Կը քննարկուի՞ արդեօք ուստի սահմանապահները «Զուարթնոց»-էն հանելու հարցը, «Ազատութիւնը» գրաւոր հարցում ուղարկած է կառավարութեան, պատասխան, սակայն, դեռ չէ ստացուած:

«Ապացուցուեց մի քանի անգամ, որ իրենք չպաշտպանեցին, էլ

չեմ ասում, որ յաճախ նաեւ ձեւ արեցին, ամէն ինչ արեցին, որ այդ սահմանները շատ աւելի խոցելի լինեն, եկան Լեռնային Ղարաբաղ, ինչ արեցին, եկան Լեռնային Ղարաբաղ, հայ ժողովրդին դուրս ուղեկցեցին հա՞, յետոյ էլ հինգ հոգի մարդ իրադարձութիւնների աւարտից 2-3 ժամ յետոյ մահացան ուստի խաղաղապահներից, ասին՝ տեսա՞ք՝ մենք ոնց էինք աշխատում, մեր խաղաղապահներն էլ մահացան: Այսինքն՝ եկան, ուղեկցեցին հայերին դուրս, դա՞ էր պաշտպանութիւնը, մի օր էլ գան, «Զուարթնոց»-ից ինձ ու ձեզ ուղեկցե՞ն դուրս», ըսաւ Սիմոնեան:

ՆԳ Նախարարը՝ Քամիլ Չէյնալիի Պաքու Վերադառնալու Մասին

Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան անդրադարձած է Հայաստանի կողմէ շարք մը ծանր յանցագործութիւններու մէջ մեղադրուող եւ հետախուզման մէջ գտնուող Քամիլ Չէյնալիի Պաքու վերադառնալու մասին լուրին: Ծեպազրոյցի ժամանակ լրագրողներէն մէկը խնդրեց մեկնաբանել Հայաստանի կողմէ հետախուզուող ատրպէյճանցի Քամիլ Չէյնալիի Պաքու վերադարձնելու լուրերը:



Ներքին գործերու նախարար Վահէ Ղազարեան

«Կայ ընթացակարգ, եթէ հետախուզվողին բռնում են, իրենք մեզ հարցում են ուղարկում, մենք էլ հարցմանը պատասխանում ենք: Դա բոլոր միջազգային հետախուզողներին է վերաբերում: Մենք մեր գործառնությունները լրիւութեամբ իրաւաչափ իրականացրել ենք: Հարցում են ուղարկել, հարցմանը պատասխանել ենք: Մենք մեր ընթացակարգից չենք շեղուել», ըսաւ Ղազարեան:

Նկատմամբ Հայաստանի կողմէ միջազգային հետախուզում յայտարարուած է:

Փետրուար 21-ի երեկոյեան յայտնի դարձաւ, որ Ռուսաստանի իրաւապահները ազատ արձակած են Չէյնալին, իսկ աւելի ուշ ատրպէյճանական լրատուամիջոցները յայտնեցին, որ Քամիլ Չէյնալին վերադարձած է Պաքու՝ տարածելով համապատասխան լուսանկարներ եւ տեսանիւթեր:

Ոչ-պաշտօնական տեղեկութիւններու համաձայն՝ Քամիլ Չէյնալին մասնակցած է 2020 թուականի 44-օրեայ պատերազմին, որուն ընթացքին իրականացուցած է պատերազմական յանցագործութիւններ, մասնաւորապէս սպաննած է խաղաղ բնակիչ մը:

Հարցումին՝ թէ արդեօք քաղաքական որոշում կայացուցած է Ռուսաստանը, Ղազարեան պատասխանեց՝ չեմ կրնար ըսել այդ քաղաքական որոշում է, թէ՛ ոչ: «Մենք նմանատիպ հետախուզողներ էլի ունենք, որ բռնել են ու բաց են թողել: Այդ հարցին կարող է ուսական կողմը պատասխանել», նշեց Ղազարեանը:

Փետրուար 21-ին յայտնի դարձաւ, որ Ռուսաստանի ոստիկանութիւնը Մոսկուայի Տոմոտետովօ օդակայանին մէջ ձերբակալած է Ատրպէյճանի քաղաքացի Քամիլ Չէյնալին, որուն

Հայաստանը Ռուսաստանէն Անջատուելու Քայլեր Կ'ընէ, Սակայն Անոնք Բաւարար Չեն. Արամ Սարգսեան

«Հանրապետութիւն» կուսակցութիւնը քաղաքական բեւեռի փոփոխման կողմնակից է, «Ազատութեան» հետ գրոյցին ըսաւ կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը՝ չհերքելով, որ Հայաստանի իշխանութիւնները այսօր քայլեր կ'ընեն Ռուսաստանէն անջատուելու ուղղութեամբ, սակայն անոնք, ըստ կուսակցութեան առաջնորդին բաւարար չեն:



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան

Սարգսեանի խօսքով՝ արտաքին քաղաքական ընթացքի ամբողջական փոփոխութիւն հարկաւոր է:

«Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավարը, մասնաւորապէս, ընդգծեց Հայաստանի՝ այլընտրանքային գէնքի գնումները ինչպէս եւրոմիութեան, այնպէս ալ Հնդկաստանէն, Հայաստանի չմասնակցելը ՀԱՊԿ միջոցառումներուն, Հոռոմի կանտոնադրութեան ընդունումը, Հայաստան-Ատրպէյճանի փոխադրութեան ճշգրտման փորձերը արեւմտեան հարթակներու վրայ, փաստաթուղթերու ստորագրումը Փրակի եւ Կրանատայի մէջ:

«Էս ամէն ինչը կայ, բաւարար են սրանք, չգիտեմ, իմ կարծիքով՝ ոչ: Մենք գտնում ենք, որ արտաքին քաղաքական ընթացքի ամբողջական փոփոխութիւն է անել պէտք եւ քաղաքական բեւեռի փոփոխութիւն է մտցնել պէտք», ըսաւ Սարգսեան՝ միեւնոյն ժամանակ Երեւանի մտավարկութիւններն ընդգծելով:

«Ինչպէս նախկին իշխանութիւններն, այնպէս էլ այսօրուայ իշխանութիւնները, լուրջ մտավա-

խութիւններ ունեն Ռուսաստանի հետ կապուած եւ այդ մտավարկութիւնները նաեւ ինչ-որ տեղ տեղին են, որովհետեւ Ռուսաստանը այնպիսի երկիր է, որն ընդունակ է ահաբեկչական արարքները սկսած մինչեւ տարբեր տեսակի գրգռութիւններ, տնտեսական տարբեր դրդապատճառներով ճնշումներ եւ այլն, այսինքն՝ քրէական մշակույթով դրան ասում են օրէնքից դուրս՝ բեւաբեկել, որը նշանակում է որեւէ սրբութիւն չունեցող երկիր, որը իր շահերի համար ցանկացած քայլի գնացող է, եւ այս հանգամանքը լուրջ վախերի խնդիր է առաջացնում, կարծում եմ, այսօրուայ Հայաստանի իշխանութիւնների մօտ», ըսաւ Սարգսեան:

Յօգուտ Հայաստանի Պիտի Բռնագանձուի Աւելի Քան 2 Միլիարդ Դրամը Գերազանցող Գոյք. ԲԴԽ

Հակափտածութեան դատարանին որոշմամբ, ելեւմուտքի նախկին նախարար Գագիկ Խաչատրեանին փոխկապակցուած հինգ գործերէն մէկով՝ յօգուտ Հայաստանի պիտի բռնագանձուի աւելի քան 2 միլիարդ դրամը գերազանցող գոյք, կը տեղեկացնէ Բարձրագոյն Դատական Խորհուրդը (ԲԴԽ):

Փատարանը հաստատած է Գլխաւոր Դատախազութեան եւ Գագիկ Խաչատրեանի գործով անցնող Գալուստ Լուքաչի Գրիգորեանի միջեւ կնքուած հաշտութեան համաձայնութիւնը, որով Գրիգորեանը անհատուց Հայաստանի սե-

փականութեան կը յանձնէ Երեւանի Աւան վարչական շրջանի Աճառեան փողոցին վրայ գտնուող շուրջ 16 հազար քմ մակերեսով հողամասը՝ 2 միլիարդ 18 միլիոն 400 հազար դրամ շուկայական արժէքով, ինչ որ կը կազմէ ընդհանուր ապօրինի ծագում ունեցող գոյքի շուրջ 77 տոկոսը:

Գագիկ Խաչատրեանէն, անոր երկու որդիներէն եւ եղբօր որդիէն ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման վերաբերեալ եւս չորս գործերու քննութիւնը Հակափտածութեան դատարանին մէջ կը շարունակուի:

Յունուարին Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Կազմած Է 10.7%



ՀՀ Վիճակագրական կոմիտէն հրապարակած է 2024թ. Յունուարի մաքրոտնտեսական ցուցանիշերը:

- 2024թ. Յունուարը 2023թ. Յունուարին համեմատութեամբ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը կազմած է 10.7%
- Արդիւնաբերութեան թողարկման ծաւալը աճած է 21.0%-ով
- Մտնալուծիւններու ծաւալը աճած է 4.4%-ով
- Առեւտրաւորի շրջանառութիւնը աճած է 19.3%-ով
- Շինարարութեան ծաւալը աճած է 9.5%-ով
- Արտահանման ծաւալը աճած է 110.0%-ով
- Ներմուծման ծաւալը աճած է 61.4%-ով:

ԼՈՒՐԵՐ

Արեւելյան Միջուկ Երեւանի Կողքին Պիտի Ըլլայ՝ Ստորագրելու Խաղաղութեան Պայմանագիր. Յունաստանի Վարչապետ



Յունաստանի վարչապետ Բիրիաքոս Միցոթաքիս եւ Նիկոլ Փաշինեանը՝ Արեւելյան միջուկի կայացած մասնաժողովի անդամները

«Մենք յստակ դէմ ենք ուժի սպառնալիքի, կամ ուժի բռնի կիրառմանը», վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ յայտարարեց վարչապետ Բիրիաքոս Միցոթաքիսը՝ շեշտելով, որ Աթէնքը վստահ է, որ տարածաշրջանի խաղաղ ճանապարհով: «Յունաստանը դիւանագիտական տեսանկիւնէն միշտ ձեր կողքին պիտի ըլլայ՝ ձեւաւորելու եւ ստորագրելու խաղաղութեան պայմանագիր Ատրպէյճանի հետ, որովհետեւ, միայն կայուն խաղաղութեան պայմանագիրը կրնայ բանալ ճանապարհը Հարաւային Կովկասին մէջ աւելի լաւ ապագայի», ըսաւ

Յունաստանի վարչապետը: Փաշինեանը իր հերթին ընդգծեց Յունաստանի մասնակցութիւնը Հայաստանի մէջ եւրոմիութեան քաղաքացիական առաքելութեան, որ կը դիտարկէ Ատրպէյճանի հետ Հայաստանի սահմանը: «Յունաստանի մասնակցութիւնը այստեղ շատ գնահատելի է եւ կարեւոր», ըսաւ Փաշինեան: Անդրադառնալով Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներու Պերլինի մէջ փետրուար 28-29-ին նախատեսուած հանդիպման՝ Փաշինեան յօսք յայտնեց, որ այդ հանդիպման ընթացքին հարաւոր պիտի ըլլայ յառաջընթաց արձանագրել:


«Անհիմն Սեղադրանքներ». Պարուն Բննադատած է Փաշինեանը

Ատրպէյճանի արտաքին գերատեսչութիւնը քննադատած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը, պնդելով որ «France 24» հեռուստաալիքին տուած հարցազրոյցին մէջ Հայաստանի ղեկավարը անհիմն մեղադրանքներ հնչեցուցած է Ատրպէյճանի հասցէին: Անոնք, ըստ Պաքուի, միտումնաւոր լարուածութիւն կը ստեղծեն տարածաշրջանին մէջ եւ նպատակ ունին հերթական անգամ խաթարել խաղաղ գործընթացը: «Գերմանիոյ վարչապետին նախաձեռնութեամբ տեղի ունեցած՝ ղեկավարներու վերջին հանդիպումէն յետոյ Հայաստանի նման յայտարարութիւնները եւ գնդակահարութիւնները վայրը Ֆրանսան ընտրելը Հայաստանի կողմէ Գերմանիոյ ջանքերուն նկատմամբ անյարգալից վերաբերմունք է: Այն կը վկայէ խաղաղ գործընթացի վրայ Ֆրանսայի շարունակուող բացասական ազդեցութեան մասին», յայտարարած է Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը: Ըստ Ատրպէյճանի արտաքին գերատեսչութեան՝ յայտարարութիւնները այն մասին, որ Ատրպէյճանը կը պատրաստուի յարձակելու Հայաստանի վրայ եւ չի պահպաներ միջազգային իրաւունքի սկզբունքները՝ առ-

կայ փաստերու ակնյայտ խեղաթիւրում են եւ նպատակ ունին մոլորեցնել միջազգային հանրութիւնը: «Վերջին շրջանին գնդակահարութեան ընթացքին եւ հինգ ամսուան կայունութիւնը տարածաշրջանին մէջ խաթարող Հայաստանի կողմէ հնչող յայտարարութիւնները, թէ Ատրպէյճանը կը պատրաստուի պատերազմի, բացարձակապէս անհիմն են», յայտարարած է Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը: Ալիե Կրկին Չառնացած է եւ Սպառնացած՝ Հայաստանին «Հայաստանն ու անոր հովանաւորները կը կարծէին, որ իրենց ոչ ոք կը պատժէ: Անոնք սխալած են, կը սխալին նաեւ այսօր»: Այս մասին փետրուար 26-ին յայտարարած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը խորհրդարանի շրջանի հասարակութեան ներկայացուցիչներու հետ հանդիպման ընթացքին: «Հայաստանը, որ կը փորձէ նոր տէր գտնել եւ կը նետուի ինչ-որ մէկու մը գիրկը, պէտք է իմանայ, որ իր միակ ճանապարհը Ատրպէյճանի բոլոր պայմանները ընդունելն է ու Ատրպէյճանի նկատմամբ տարածաշրջանի պահանջներէն հրաժարելը», ըսած է Ալիեւ:

Հայաստանի Եւ Ատրպէյճանի Միջեւ Խաղաղութեան Հասնելու Համար Մնացած Է Քանի Սը Խնդիր. Միլլըր

Երեւանի եւ Պաքուի միջեւ խաղաղութիւնը մօտ է: Այս մասին ըսած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան մամուլի ծառայութեան ղեկավար Մեթիու Միլլըր հերթական ճեպագրոյցի ընթացքին: Հարցումին՝ նախորդ շաբաթ Միլլըրի մէջ ԱՄՆ պետական քարտուղարը հանդիպած է Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ. ան ղեռ կը հաւատա՞յ է, որ խաղաղութիւնը հնարաւոր է ձեռք բերել, Միլլըր պատասխանած է. «Ան ղեռ կը հաւատայ, որ խաղաղութիւնը հնարաւոր է ձեռք բերել, եւ ան այդ անմիջականօրէն քննարկած է այդ երկու երկիրներու ղեկավարներուն հետ եւ անոնց կողմէ ըրած է աշխատելու միասին՝ յաղթահարելու համար այն, ինչ որ վերջնադրոյցի համար կը ներկայացնէ միայն քանի մը մնացած խնդիր: Եւ մենք պիտի շարունակենք խորհուրդ տալ երկիրները խաղաղութեան համաձայնագրի հասնելու համար: Ես գիտեմ, որ երկու երկիրներուն առաջնորդները երկկողմ հանդիպում ունեցած



ԱՄՆ Պետական Քարտուղարութեան մամուլի ծառայութեան ղեկավար Մեթիու Միլլըր

են Միլլըրի մէջ, եւ այդ պատճառով մենք պիտի շարունակենք առաջարկել Միացեալ Նահանգներու օգնութիւնն ու աջակցութիւնը համաձայնութեան հասնելու համար»:

Հայաստանը Կը Բազմազանեցնէ Իր Անվտանգութիւնը Եւ Արտաքին Քաղաքականութիւնը. Աս Քարտուղար

Հայաստանը տատանումներ չի կատարեր, Հայաստանը կը բազմազանեցնէ իր անվտանգութիւնը եւ արտաքին քաղաքականութիւնը. այդ ամբողջովին բաց կը կատարենք: Այս մասին լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամանակ ըսաւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը՝ անդրադառնալով Ռուսիոյ արտաքին գործերու փոխնախարար Կալուզինի յայտարարութիւններուն ՀՀ իշխանութիւններուն՝ ՀԱՊԿ-էն դուրս գալ-չգալու հարցին շուրջ: «Հայաստանի բազմազանեցումը ներառում է ոչ միայն Արեւմուտքը, այլեւ Հնդկաստանը եւ միշտ բազմաբարձր երկրներ: Եւ Հայաստանը, տեսնելով, որ մինչեւ 2020-2021 թուականը, այն անվտանգային համակարգը, որի մաս է կազմում Հայաստանը, որը չի աշխատում ընդհանրապէս, գործունեայ չէ, իր համար անվտանգութեան երաշխիքներ է փնտռում, եւ շարունակելու ենք այս ուղղութեամբ աշխատանքները: Այստեղ ես որեւէ խնդիր չենք տեսնում: Մենք հաստատական ենք մեր քաղաքականութեան ուղղութեամբ եւ մենք իրագործելու ենք մեր բոլոր նպատակներն այս ուղղութեամբ», ըսած է ան: Ինչ կը վերաբերի Ատրպէյճանի մէջ Ռուսիոյ դեսպանի այն որակումին, թէ Սեպտեմբեր 19-ի



Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան

գործողութիւններուն հետեւանքով ԼՂ բնակիչներու բռնի տեղահանումը «հակահաբեկչական գործողութիւն է», ապա Արմէն Գրիգորեանը նշած է. «Չեմ կարող մեկնաբանել նրա խօսքերը, բայց եթէ խաղաղապահները երկրի ներկայացուցիչը, խաղաղապահներ, որոնք պէտք է պաշտպանեն Արցախում, նման ձեւակերպումներ է տալիս, պէտք է թողնել հանրութեան գնահատականին: Կարծում եմ՝ հայ հանրութիւնը լաւագոյնս է գնահատում այդպիսի յայտարարութիւնները»:

Հայաստանը Յառաջընթաց Արձանագրած Է Global Innovation Index-2023 Աղիւսակին Վրայ

Global Innovation Index-2023 վարկանիշային աղիւսակին մէջ Հայաստանը զբաղեցուցած է 72-րդ հորիզոնականը: Հայաստանը դիտարկուած է Հիւսիսային Աֆրիկէ եւ Արեւմտեան Ասիա բաժին մէջ, կը նշուի, որ «երկիրը տեսանելի յառաջընթաց արձանագրած է» վերջին տարուան մէջ:

Տարածաշրջանային երկիրներէն Վրաստանը զբաղեցուցած է 65-րդ հորիզոնականը, Ատրպէյճանը՝ 89: Թուրքիան 39-րդն է, Ռուսաստանը՝ 51-րդը, Իրանը՝ 62-րդը: Վարկանիշային աղիւսակը կը գլխաւորէ Զուիցերլանդը: Անոր կը յաջորդեն Շուեյտը, ԱՄՆ-ը, Միացեալ Թագաւորութիւնը եւ Սինկափուրը:

«Աւրորա»-ի Այս Տարուան Հիմնական Միջոցառումները Տեղի Պիտի Ունենան Լոս Անճելըսի Մէջ



«Աւրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը յատուկ միջոցառումներու շարք պիտի կայացնէ 2024թ. Մայիս 8-10-ին, Լոս Անճելըսի մէջ: Միջոցառումները, ընդ որում՝ 2024թ. «Աւրորա» մրցանակի շնորհման արարողութիւնը եւ Մարդու իրաւունքներու եւ մարդասիրութեան համաժողովը, տեղի պիտի ունենան Գալիֆորնիոյ համալսարանի «Խոստում» մարդու իրաւունքներու հիմնարկին հետ համագործակցութեամբ:

«Մեզ համար պատիւ է միաւորել ջանքերը «Խոստում» հիմնարկի հետ, որպէսզի աջակցենք ակնաւոր մարդասէրներին եւ մարդու իրաւունքների պաշտպաններին, որոնք վտանգում են սեփական անձը՝ այլոց օգնելու համար», ըսաւ դոկտոր Նուպար Աֆէեանը: «Անցած ութ տարիների ընթացքում «Աւրորա»-ն ստեղծել է համախոսների համաշխարհային ցանց, որոնք նուիրուած են այս կարեւոր գործին, եւ մենք ուրախութեամբ սպասում ենք նրանց Լոս Անճելըսի միջոցառումներին, ինչն աւելի կը բարձրացնի համայնքային աքթիւիստների ձայնն ամէնուրեք եւ աշխարհին ցոյց կու տայ իւրաքանչիւր անհատի ուժը դրական փոփոխութեան հասնելու գործում»:

«2024թ. «Աւրորա» մրցանակի միջոցառումները Լոս Անճելըսում հնարաւորութիւն կու տան հիւրերին եւ մասնակիցներին իրենց

երախտագիտութիւնը յայտնելու նրանց, ովքեր, չինայելով սեփական անձը, օգնում են կարիքի մէջ յայտնուածներին: Յոյսով ենք, որ սա կ'որգեւորի մարդկանց այդ երախտագիտութիւնը վերածելու գործի՝ միանալով մեզ եւ մաս կազմելով այս համաշխարհային շարժմանը՝ ի նպաստ համընդհանուր բարօրութեան», նշեց միջոցառումներու համանախագահ Էրիկ Էսրայէլեանը: «Լոյս սփռելով մարդասիրութեան վրայ, որը յաճախ դրսեւորուած է ամենադժուարին պահին՝ մեր նպատակն է ԱՄՆ-ում եւ ամբողջ աշխարհում բարձրացնել իրազեկութիւնն այն սովորական մարդկանց մասին, որոնց արտասովոր քայլերի է մղում կարեկցանքի եւ արդարութեան զգացումը»:

2024թ. «Աւրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի դափնեկիրին անունը պիտի յայտարարուի «Աւրորա» մրցանակի շնորհման արարողութեան ժամանակ: Դափնեկիր պիտի դառնայ «Աւրորա»-ի հերոսներէն մէկը. անոնց անունները յայտնի դարձած էին 2023թ. Սեպտեմբերին: Մրցանակը կը տրուի դափնեկիրին՝ հնարաւորութիւն տալով անոր շարունակելու մարդասիրութեան շղթան եւ աջակցելու մարդասէրներուն եւ կազմակերպութիւններուն, որոնք երկրորդ հնարաւորութիւն կու տան կարիքի մէջ գտնուող մարդոց:

Հայաստանը Երկրորդն Է Արեւելեան Գործընկերութեան Երկիրներու Դատական Իշխանութեան Անկախութեան Աղիւսակով

Արեւելեան գործընկերութեան երկիրներու 2023 թուականի համար կատարուած ուսումնասիրութիւններուն բերումըով Հայաստանի դատական իշխանութեան անկախութեան ցուցակը վարկանիշային աղիւսակին մէջ արձանագրած է աճ՝ 2021 թուականի 0,71-էն հասնելով 0,89-ի: Հայաստանը շատ չնչին՝ ընդամենը 0,01 միավորով գիշած է ամենաբարձր վարկանիշ ունեցող Մոլդովային, որուն դատական իշխանութեան անկախութեան ցուցակը գնահատուած է 0,90: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ դատական բաժանմունքի Ֆէյսպուքի էջը:



րեւան երկրների շարքում: Նշենք, որ Արեւելեան Գործընկերութիւնը (Ալգ) համատեղ քաղաքական նախաձեռնութիւն է, որի նպատակն է խորացնել ու ամրապնդել Եւրոպական միութեան (ԵՄ), նրա անդամ պետութիւնների ու վեց արեւելեան հարեւանների՝ Հայաստանի, Ատրպէյճանի, Պելառուսի, Վրաստանի, Մոլդովայի եւ Ուքրանիայի միջեւ յարաբերութիւնները», կ'ըսուի հաղորդագրութեան մէջ:

Հայաստանի Ու Իրաքի Նախագահները Քննարկած Են Պաշտպանութեան Ոլորտին Մէջ Համագործակցութիւնը



Հայաստանի եւ Իրաքի նախագահները կը գրուցեն լրագրողներու հետ

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանն ու Իրաքի նախագահ Ապտուլ Լաթիֆ Ռաշիդտը քննարկած են պաշտպանութեան եւ անվտանգութեան ոլորտին մէջ համագործակցութեան հեռանկարները:

Պաղատալի մէջ Իրաքի նախագահին հետ հանդիպումէն յետոյ լրատուամիջոցներուն համար յայտարարութիւններու ժամանակ այս մասին ըսաւ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանը:

«Անդրադարձ ենք կատարել պաշտպանութեան եւ անվտանգութեան ոլորտներում հայ-իրաքեան համագործակցութեան խորացման հեռանկարներին», նշեց Հայաստանի նախագահը:

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանը պաշտօնական այցով Իրաք կը գտնուի: ՀՀ նախագահը հանդիպում պիտի

ունենայ նաեւ Իրաքի վարչապետ Մոհամմատ Շիւաալ Սուտանիի հետ:

ՀՀ նախագահը այցի ընթացքին դասախօսութեամբ հանդէս պիտի գայ Պաղատալի համալսարանին մէջ: Ան պիտի այցելէ նաեւ Էրպիլ, ուր հանդիպումներ պիտի ունենայ Իրաքեան Քիւրտիստանի շրջանի պատուաւոր նախագահ Մատու Պարզանիի եւ Իրաքեան Քիւրտիստանի շրջանի նախագահ Նեշիվան Պարզանիի հետ:

Վահագն Խաչատուրեանը հանդիպումներ պիտի ունենայ նաեւ Իրաքի եւ Իրաքեան Քիւրտիստանի հայկական համայնքներու ներկայացուցիչներուն հետ: ՀՀ նախագահի պատուիրակութեան կազմով Իրաք ժամանած են նաեւ գործարարներ, որոնք կը մասնակցին գործարար համաժողովի:

Ֆրանսայի Պաշտպանութեան Նախարար

Շարունակուած էջ 1-էն

ղական նիւթերու: Ամէն անգամ գործնական կարիքներէն պիտի շարժինք, որ պիտի արտայայտուի մեր հայ գործընկերներուն կողմէ: Մենք պէտք է այդ համապատասխան առաջարկները ընենք ըստ այդ համապատասխան կարիքներու՝ ըլլալ այդ սպառազինութիւն, թէ վերապատրաստում պաշտպանական նպատակներով», ըսաւ նախարարը եւ ընդգծեց, որ ընկերային ցանցերուն մէջ երբեմն Ֆրանսայի դիրքորոշումը կ'աղաւաղուի:

Լըքորնիուն նաեւ տեղեկացուց, որ Պապիկեանի հետ խօսած են, մասնաւորապէս, «Միաթրալ» հրթիռներու մասին:

«Tales ռատարներու մասին է նաեւ խօսքը: GM200 ռատարներու մատակարարում շատ շուտով պիտի ըլլայ, եւ կը տեսնէք, որ ամէն անգամ կը խօսինք պաշտպանական զէնքերու մասին», ըսաւ Ֆրանսայի պաշտպանութեան նախարարը:

Նոյն ասուլիսի ընթացքին ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանին իրեն ուղղուած հարցումի մը պատասխանելով ըսաւ, «Գաղտնիք չէ, որ 2022թ. սեպտեմբերեան դէպքերից յետոյ Հայաստանը իր զինուած ուժերը եւ ռազմատեխնիկական համագործակցութիւնը բազմազանեցնելու խնդիր դրեց իր առաջ, եւ առաջին անգամ է, որ դրա մասին մենք

սկսեցինք բարձրաձայնել: Հեռաւոր Արեւելքում մեզ առաջինը արձագանգեց Հնդկաստանը, Եւրոպայի մեր գործընկերներից մեզ առաջինը արձագանգեց մեր բարեկամ Ֆրանսան: Ֆրանսայի արձագանգը եւ մեր մօտ 1,5 տարուայ համագործակցութիւնը, այո՛, Հայաստանի համար ունի շատ կարեւոր նշանակութիւն: Եւ մեր գործընկերութիւնը նաեւ առաջիկայ տարիների համար մեզ հնարաւորութիւն է տալու երկարաժամկէտ ծրագրաւորում իրականացնելու»:

Լըքորնիուն Երեւան այցելութեան նախօրեակին Փարիզ լոյս տեսնող «Le Figaro» թերթը գրած էր որ, Ֆրանսան ֆետրուար 22-ին Հայաստան կ'առաջ պաշտպանական սպառազինութեան խմբաքանակ, որ կը ներառէ Thalifs ընկերութեան Ground Master (GM 200) երեք ռատար, որոնք հնարաւորութիւն պիտի տան 250 քիլոմէթր հեռաւորութեան վրայ յայտնաբերել հակառակորդի ինքնաթիռները, ինչպէս նաեւ զիշերային տեսողութեան սարքեր, հեռադիտակներ:

Կը նշուի նաեւ, որ պաշտպանութեան ոլորտին մէջ համագործակցութեան վերաբերեալ կողմերուն միջեւ ստորագրուած համաձայնագրով կը նախատեսուի, որ Ֆրանսայի բանակը այս տարի լեռնային մարտական պատրաստութեան երեք դասընթացք պիտի կազմակերպէ հայերուն համար:

Տեղի Ունեցաւ Միսաք Եւ Մեկինէ Մանուշեաններու Աճիւնները Ֆրանսայի Մեծագոյն Գործիչներու Պանթեոնին Մէջ Ամփոփելու Արարողութիւնը



Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ տիկին Աննա Յակոբեանը Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի եւ տիկինը՝ Պրիծիթ Մաքրոնի հետ ներկայ գտնուած են Դիմադրութեան շարժման հայազգի հերոս Միսաք Մանուշեանի եւ տիկինը՝ Մեկինէ Մանուշեանի աճիւնները Ֆրանսայի մեծագոյն գործիչներու պանթեոնին մէջ ամ-

որ Միսաք Մանուշեանը ազատ էր, երբ կը քալէր փողոցէն եւ կ'անցնէր այս պանթեոնին կողքով: «Ան կը պատկերացնէր, թէ ինչպիսին պիտի ըլլար իր սիրելի Հայաստանը: Մանուշեան ինքզինք կ'անուանէր «ցասուձով լի վագր», երբ ձերբակալեցին, բայց Մեկինէն իր հետ էր բոլոր ողիսականներուն մէջ եւ կ'ապրեցնէր զինք: Վերջնական, մշտական ընտրութիւնը ազա-



փոփելու արարողութեան: Միջոցառման ներկայ եղած են նաեւ Ֆրանսայի վարչապետ Կապրիէլ Աթալը, Ֆրանսայի նախկին նախագահ Ֆրանսուա Օլանտը, Հայաստանի եւ Ֆրանսայի կառավարութիւններու, օրէնսդիր մարմիններու անդամ-

տութիւնն էր: Ընտրեց ընդատակեայ կեանքը, որ Ֆրանսացին ոչինչ կորսնցնէ իր ազատութենէն՝ մշտապէս ըլլալով ազատութեան արբեցած զինուորը», նշած է Մաքրոնը՝ աւելցնելով, որ այսօր կայ Ֆրանսա, որ երախտապարտ է իրենց:



ներ, հասարակական, քաղաքական գործիչներ: Արարողութեան ընթացքին ելոյթով հանդէս եկած է Էմանուէլ Մաքրոնը: Իր խօսքին մէջ Ֆրանսայի նախագահը նշած է,

«Միսաք եւ 23 այլք, եւ բոլոր այլք, որ կը յարէին այս ազատութեան, ի վերջոյ պատուի արժանացան, սէր եւ ազատութիւն՝ ի յաւերժութիւն», ըսած է Ֆրանս

Merci Macron, Merci France

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ֆրանսայի կողմէ Միսաք Մանուշեանի պանթեոնականացումը սքանչելի եւ հոյակապ արարողութիւն մըն էր, որ պանծացուց անոր յիշատակը եւ իրեն հետ մեծարեց Հայ ժողովուրդը: Ֆրանսական France 2 հեռատեսիլէն եւ քանի մը այլ հեռատեսիլի կայաններէ ցոյց տրուած երեք ժամուան զգլխիչ արարողութիւնը արտացոլացուց ամէն ինչ, որ հայու սրտին կը խօսի որպէս ազգային պատմութիւն եւ ազգային արժէք - ցեղասպանութիւն, ծնողազրկութիւն ու որբութիւն, թափառական հայու մուսլ ճակատագիր, Ազնաւուրի ու Կոմիտասի երաժշտութիւն, եւ հայկական տուտուկի խորասոյզ նուագ:

Կատարեալ կազմակերպութեամբ եւ նախագահ Էմանուէլ Մաքրոնի ազնիւ որոշումով իրականացած պանթեոնականացումին ներկայ գտնուեցան, մեծ թիւով հայերու կողքին, երկրին վարչապետն ու ընդդիմադիր ազգայնական ուժերու ներկայացուցիչ Մարին Լը Փենը: Հոն էին Ֆրանսացի ժողովուրդին ներկայացուցիչները՝ աջով ու ձախով եւ կեղրոնով, մեծարելու համար համայնավար հայը, որ կեանքը զոհած էր Ֆրանսայի ազատագրութեան համար: Հոն էր նաեւ Հայաստանի վարչապետը՝ Մաքրոնի հրաւերով ժամանած եւ իր կողքին կայնած, որպէս ներկայացուցիչ հայ ժողովուրդին, որբութենէ դէպի հերոսութիւն քալած Միսաք Մանուշեանով մեծարուելու եւ անով հպարտանալու պատուին արժանանալու համար:

MERCI MACRON, MERCI FRANCE.

Շարլ Ազնաւուրի յուղարկաւորութեան առթիւ ցուցաբերուած ասպետական մեծարանքը, որ տրուած էր նախագահ Մաքրոնի կողմէ քանի մը տարի առաջ, եւ ներկայիս ալ Միսաք Մանուշեանի պանթեոնականացումը անոր կողմէ, ամէն հայու սրտի տաքուկ մէկ անկիւնին մէջ կը դնէ զայն: Անոր հայնապատ դիրքորոշումը 44-օրեայ պատերազմէն ետք, Հայաստանի եւ հայուն ամէնուրեք կուտայ իրաւունք կոչելու զայն սրտամօտ եւ սրտակից բարեկամ:

Ու երբ կը դիտես օտարին կողմէ տրուած այս աստիճանի մեծարանք հայու մը նկատմամբ, անոր՝ որ տոգորուած էր ազատագրական պայքարի տենչով եւ լեցուն էր համամարդկային գաղափարներով որպէս համայնավար, չես կրնար մտքովդ չչիշել ան, որ Միսաք Մանուշեանի պէս կանգնած իր տասնինը ընկերներու կողքին՝ կախաղան բարձրացաւ նոյն տենչով ու գաղափարով տոգորուած եւ

Հայաստանը ազատագրուած տեսնելու երազով: Չես կրնար Ֆրանսայի ըրածը մեծարելով չակնկալել, որ քու հայրենիքդ ալ մեծարէ իր ազգային հերոսը՝ Մեծն Փարամազը, առանց նկատի առնելու անոր գաղափարական հաւատամքը, ինչպէս ծայրայեղ աջակողմեան Մարին Լը Փեն նկատի չառաւ Մանուշեանին համայնավար ըլլալը՝ ներկայ գտնուելով անոր մեծարանքի հանդիսութեան:

Միսաք Մանուշեանի պանթեոնականացման առթիւ Էմանուէլ Մաքրոնի կողքին կանգնած Նիկոլ Փաշինեանը դաս պէտք է առնէ անկէ՝ պանծացնելու յիշատակը Մեծն Փարամազի, որ Միսաք Մանուշեանի նման կը հաւատար ընկերվարական գաղափարին եւ անոր պէս գոհուեցաւ իր երկրին ու ժողովուրդին ազատագրութեան համար:

Մանուշեանի զնդակահարուածը տեղի ունեցած էր 21 փետրուար 1944-ին: Ֆրանսան ութսուն տարի ետք, աջ ու ձախ վարչակարգեր ունենալէ ետք, ունեցաւ Էմանուէլ Մաքրոնի պէս նախագահ մը, որ նկատի չառաւ Միսաք Մանուշեանի համայնավար ըլլալը եւ անոր մէջ տեսնելով ազգային հերոսը՝ զայն պանթեոնականացուց Ֆրանսացի մեծ մարդոց կողքին: Պանթեոնի մուտքի ճակատին վրայ գրուած է «ԱՅՐԵՆԻՔԸ ԵՐԱՆՏԱՊԱՐՏ Է ՄԵՍՄ ՄԱՐԴՈՅ» (AUX GRANDS HOMMES LA PATRIE RECONNAISSANTE): Եռաբլուրի վրայ ալ մենք կը ճանչնանք մեր հերոսները: Հայրենիքը զանոնք կը ճանչայ որպէս մեծ մարդիկ:

Ժամանակն է, որ Փաշինեանն ալ, Մաքրոնի օրինակին հետեւելով, հարիւր տասը տարի ետք՝ 2025-ին, զանց առած գաղափարական պատկանելիութիւնը Մեծն Փարամազի՝ ունենայ աջակողմեան Մաքրոնի քաջութիւնը համայնավար Միսաք Մանուշեանը մեծարող, որպէսզի Մեծն Փարամազն ալ նկատուի ազգային հերոս եւ իր արժանի տեղը գտնէ Եռաբլուրի մէջ՝ Անդրանիկ փաշայի կողքին:

Վերադառնալով Միսաք Մանուշեանի պանթեոնականացման արարողութեան անթերի, կատարեալ եւ բարձրորակ բնույթին, որ վայել է աշխարհին ճաշակ ու մշակոյթ տուած Ֆրանսայի, ամէն հայու սրտէն բխած շնորհակալութիւն մեր սիրելի Մաքրոնին ու Ֆրանսային՝ ըսելու, թէ մենք ալ երախտապարտ ենք իրենց մեր հերոս գաւազան մեծարելուն առթիւ ցուցաբերած վեհանձնութեան համար:

MERCI MACRON, MERCI FRANCE.

Ֆրանսա-Հայաստան Յարաբերութիւնները

Շարունակուած էջ 1-էն

ունենայ, ապա կարճ, միջին եւ այլ հեռավորութեամբ հրթիռները եւս պիտի ըլլան ձեր տրամադրութեան տակ», ու աւելցուց «Մենք Ֆրանսան եմք, եւ թոյլ չենք տար մեզ վախցնեն», անդրադառնալով ռուսական եւ ատրպէյճանական տեղեկատուական յարձակումներուն, որոնց թիրախ կը դառնայ Փարիզ այդ երկու երկիրներուն կողմէ:

Ֆրանսացի նախարարը երեւան եկաւ ոչ միայն զօրակցական արտայայտութիւններ ունենալու ու խոստումներ տալու, այլ եւ իր հետ բերաւ կարգ մը զինատեսակներ, որոնց շարքին գիշերային տեսողութեան ակնոցներ, որոնք խիստ կարելոր են ռազմադաշտի վրայ:

Այս բոլորը քննադատելու դարձուցած են ռուսական եւ Հայաստանի փութիւնեան շրջանակները, որոնք արշաւ սկսած են ֆրանսական զէնքերու որակին դէմ, փորձելով համոզել հանրային կարծիք, որ նախընտրելի է ռուսական զէնքին ապահովելը, քան ֆրանսականին: Այդ տեսակետը առաջ մղողներ կը սխալին երկու մակարդակներու վրայ: Առաջինը այն է որ, 44-որեայ պատերազմէն յետոյ Մոսկուան մերժեց Հայաստանին մատակարարել խոստացուած զինատեսակներ՝ մղելով երեւանի փնտռելու զէնքի այլընտրան-

քային աղբիւրներ: Երկրորդը՝ միջազգային ռազմական փորձագէտներու կարծիքով Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ետք, Ֆրանսան աշխարհի երկրորդ առաջատար երկիրն է արդիական զինատեսակներու արտադրութեան գծով: Զետեւաբար, Հայաստանի համար աւելի նպաստաւոր է անցում կատարելը՝ դէպի ֆրանսականին եւ այլ երկիրներու զինատեսակներուն, քան սպասել, թէ երբ Ռուսաստան պիտի կատարէ իր դաշնակցային պարտաւորութիւնները, երբ Պաքուի բռնապետը ամէն օր կը սպառնայ Հայաստանի դէմ նոր պատերազմով:

Ֆրանսայի հետ յարաբերութիւնները թեւակոխելով նոր մշածող Հայաստանի առջեւ կը բացուին նոր հորիզոններ: Ռուսաստանի հետ կապերուն մէջ որոշ վտանգներ պարունակելով հանդերձ, այս նոր ռազմավարութիւնը կը մնայ աւելի յուսադրող ու նպատակայարմար: Վերջին տարիներու ռազմական ծախսողումներէն ետք, Հայաստանի կառավարութիւնը այսօր կը շարժի միայն իր երկրի շահերէն մեկնած, որքան որ ալ այդ անհանգստութիւն պատճառէ մեր երբեմնի դաշնակիցին:

Հայութիւնը ամենուրեք կ'ողջունէ Ֆրանսայի խիզախ կեցուածքը մեր Հայրենիքին նկատմամբ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

Փաշինեան Կը Յայտարարէ

Շարունակուած էջ 1-էն

հետեւանքն այն է, որ մենք այսօր գործնականում, ըստ էութեան, սառնեցրել ենք մեր մասնակցութիւնը ՀԱՊԿ-ի կազմակերպութիւններում: Վաղը ինչ կը լինի, վաղը կ'երեւայ», նշած է Փաշինեան:

Քրեմլինէն արձագանգեցին, թէ Հայաստանը պաշտօնական ծանուցում չէ ուղարկած ՀԱՊԿ-ին՝ անդամակցութեան սառնեցման վերաբերեալ: Ռուսաստանի նախագահի խօսնակ Տմիթրի Փեսքով նաեւ ընդգծած է՝ կը նախատեսեն հայկական կողմի հետ շփումներուն մէջ յատկացնել ՀԱՊԿ-ին Հայաստանի անդամակցութեան հետ կապուած իրավիճակը:

«Հայկական կողմը այս առնչութեամբ որեւէ պաշտօնական գործողութիւններ չէ ձեռնարկած: Մենք կը պատրաստուինք կապ հաստատելու մեր գործընկերներուն հետ եւ պարզաբանելու այս յայտարարութիւններուն իմաստը», ըսած է Փեսքով:

44-օրեայ պատերազմէն յետոյ Հայաստանի վրայ ատրպէյճանական յարձակումներու ընթացքին ՀԱՊԿ-ը հայկական կողմին ոչ միայն ռազմական օգնութիւն չտրամադրեց, այլեւ չզատապարտեց Պաքուի գործողութիւնները: Անկէ յետոյ երեւանը, բացի ՀԱՊԿ նիստերը պոչքոթելէ, կառուցին մէջ դեպքան չի նշանակեր, հրաժարած է գլխաւոր քարտուղարի տեղակալի իր բաժինէն:

«2023 թուականի սեպտեմբերեան իրադարձութիւններէ ժամանակ եւ Հոկտեմբերին Ռուսաստանի ամենաբարձրաստիճան ներկայացուցիչները ուղիղ կոչ էին անում Հայաստանի քաղաքացիներին՝ դուրս գալ փողոցներ եւ

տապալել Հայաստանի ընտրուած, օրինական կառավարութիւնը: Ռուսական հեռուստատեսութիւնները վեց տարի շարունակ համակարգուած, հետեւողական եւ նպատակամղուած հակաքարոզչութիւն են անում Հայաստանի ընտրուած իշխանութեան եւ անձամբ իմ դէմ: Էլ ուրիշ ի՞նչ հետեւութիւն անելու տեղ է մնում», ընդգծած է վարչապետը «France 24»-ին տուած հարցազրոյցին մէջ:

Մեծարանքի Շքեղ Հանդիսութեամբ

Շարունակուած էջ 1-էն

դիտարկներէն՝ Ծովիկ Քէօրոզլեան, բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց սոյն չիշարժան ձեռնարկի մասնակիցները եւ պարզեց հաւաքի նպատակը, որ է՝ գնահատել գաղափարանուէր վաստակաշատ ընկերներու օգտաշատ ծառայութիւններն ու ներդրումը ի նպաստ կուսակցութեան ազգանուէր առաջադրանքներու իրագործումին:

Այնուհետեւ Ծովիկ Քէօրոզլեան մէկ առ մէկ կարդաց կենսագ-

Համբիկ Սարաֆեանի, արժանանալով ներկաներու բուռն ծափահարութեանց:

Այս առթիւ՝ ընկեր Համբիկ Սարաֆեան խօսք առնելով իր շնորհաւորութիւններն ու սրտագին բարեմաղթութիւնները փոխանցեց շքանշանակիր ընկերներուն: Ան՝ միաժամանակ անդրադարձաւ իւրաքանչիւր պարզեւտրեալին բարեմասնութիւններուն ու բերած ներդրումի կուսակցութեան քաղաքական, ընկերային եւ ժողովրդանուէր ծառայութիւններուն մէջ, մաղթելով յարատեւութիւն եւ նո-



րութիւնները այն ընկերներուն, որոնք պիտի արժանանային կուսակցութեան գերագոյն պատուանշանին՝ «Փարամազ» պատուոյ բարձր շքանշանին: Անոնք են՝ ընկերներ Ճորճ Յակոբեան (Նեվատա), Վազգէն Գալթագեան (Լուիզիանա), Գրիգոր Խոտանեան, Ժիրայր Կիրակոսեան, Յարութ Պոյամեան, Վահէ Աջապահեան եւ Վարդան Քէօրոզլեան:

Վերոյիշեալ ընկերները բեմ բարձրանալով իրենց պաշտօնական շնորհաւորագիրն ու «Փարամազ» պատուոյ շքանշանը ստացան ձեռամբ՝ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ ընկ. Տօքթ.

րանոր ձեռքբերումներ իրենց նուիրական առաքելութեան մէջ:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին յաջորդեց տօնական խրախճանք, որուն հանդիսավարութիւնը ստանձնած էր Ստեփան Յովակիմեանը: Երեկոյի ընթացքին ազգային-հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան շնորհալի երգիչներ՝ Դաւիթ Սամուէլեանն ու Յարութ Յակոբեանը:

Միջոցառումի աւարտին երգիչներուն միանալով ներկաները յոտնկայս կատարեցին «Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ» յեղափոխական երգը:

Գ.Մ.

New Publication

Այս լուսանկարը իրօք թարմացուց չիղողութիւնս եւ յուզախառն մտածումներս ուղղորդեց դէպի մեր մօտ անցեալը՝ պատահած իրադարձութիւններուն բովանդակ անբարեցոլակութիւնը եւ այսօրուան անկայուն իրականութիւնը, որուն յանձնուած ըլլալու անգորութեան զգացումը տակաւին կը ճնշէ մեր միտքը: Պիտի չուզեմ յանկերգել վեր-ջին պատերազմին մեր կրած ծանր պարտութեան եւ անփոխարինելի կորուստներուն պատմութիւնը, անդրադառնալ հարեւան թշնամիին ծաւալապաշտական նկրտումներուն, մեր ազգային բազմադարեան պատմութիւնը զեղծելու եւ մշակոյթ թալանելու իր մշակած ծրարներուն, որոնք նաեւ այսօր Դամոկլեան սուրերու պէս կախուած են մեր գլխուն վրայ: Այնուամենայնիւ, հակառակ այս իրողութեան, միջազգային պատմութիւնը, առաւել եւս մեր ազգայինը կու գան մեզի պատգամելու, որ ոչ մէկ բռնապետ, ոչ մէկ նախարարաձեւում (ազրեսիա) իրականացնող պետութիւն ցայսօր չէ կրցած գէնքի ուժով ճնշել թէկուզ իրմէ յաղթուած ժողովուրդ մը. տիեզերքի մէջ ոչինչ աւելի ուժեղ եւ տոկուն է, քան մարդուն մէջ գոյութիւն ունեցող բնածին ազատ ապրելու ցանկութիւնը, որուն ոչ մէկ իշխանութիւն երկարաժամկէտ չի կրնար դէմ կանգնել, ոչ իսկ ամենագորեղ բռնակալ մը իր գերհզօր բանակով եւ գերարդիական գէնքերով:

Այս առումով պատմութիւնը փառահեղ փաստեր արձանագրած է իր ոսկիէ էջերուն մէջ, որոնց անունները, ըլլան անոնք անհատ հերոսներ թէ հաւաքականութիւններ, յաղթանակի դափնիով պսակած է՝ վերածելով գանոնք կենդանի խորհրդանշաններու կամ մնացուն ներշնչարանի մը բռնաճնշուած անհատներու եւ ազգերու համար:

Առանց ծանրաբեռնելու առկայ յօրուածին միտք բանին, պիտի ուզէի քանի մը կարկառուն օրինակներ նշել պատմական նման իրադարձութիւններու. Նախակրթարանի տարիներուն, կրօնի դասերէն տակաւին ի տղայի տիոց սորված ենք Աստուածաշունչին աւանդած ամենաթուրանի դրուագներէն Դաւիթի ու Գողթիաթի պատմութիւնը: Այս աւանդութեան հիմնական ուղերձը այն է, որ չափն ու ուժը միշտ չէ, որ

հակամարտութիւններու առթիւ գերհզօրին ի նպաստ վճռորոշ ելք մը կ'ապահովեն: Դաւիթ, որ երիտասարդ հովիւ մըն էր, կը տապալէ գինք մենամարտի կանչած հսկայ Գողթիաթը՝ իր պարսատիկէն արձակած ընդամէնը քարով մը: Այս պատմութիւնը յաճախ կը մեկնաբանուի իբրեւ պերճախօս օրինակ, թէ ինչպէ՞ս կրնան քաջութիւնը, հաւատքն ու հմտութիւնը աւելի կարելորդ ըլլալ, քան ֆիզիքական ուժը կամ արտաքին հանգամանքները: Արդարեւ, կարելի է յաղթահարել մեր առջեւ ծառայած նոյնիսկ անյաղթահարելի թուող խոչընդոտները, եթէ մեր ներսիղին առկայ է վճռականութեան, ինքնավստահութեան եւ յարատեւութեան անխորտակելի ոգին:

Դասական հանրածանօթ օրինակ մըն է նաեւ Մարթոնի ճակատամարտը, որ տեղի ունեցած է Ք.ա. 490 թուականին՝ պարսկներուն եւ աթենացիներուն միջեւ: Մարթոնը անհաւասար ուժերու՝ պարսկներու սպառնալուծած գերակշռող բանակին դէմ աթենացիներուն թիւով շատ աւելի փոքրաքանակ ռազմիկներու մղած ինքնապաշտպանական ճակատամարտն էր, որ կ'աւարտի փայլուն յաղթանակով մը՝ շնորհիւ իրենց ցուցաբերած վճռականութեան եւ հմուտ մարտավարութեան: Ճիշդ օգտագործելով իրենց իմացութիւնը սեփական երկրին, միջավայրին եւ աշխարհագրական տեղանքին մասին, նաեւ իրագործելով վազքի իրենց բացառիկ կարողութիւնները, աթենացիք կրցան անակնկալի բերել պարսիկ զօրաբանակը եւ ջախջախել զայն: Այս պատմական ճակատամարտը ցոյց կու տայ, որ նոյնիսկ գերակշռող ուժերու դէմ վճռական եւ ռազմավարական հմուտ դիմադրութիւն ցուցաբերել միշտ ալ կարելի է: Պէտք չէ վախնալ թշնամիին ուժէն եւ բանակներու թուաքանակէն, եթէ յաղթուածը տակաւին իր մէջ կը կրէ ազատասիրութեան, հայրենասիրութեան ու դիմադրողական ոգիին առկայծումները:

Աւելին՝ Մարթոնի ճակատամարտը յաճախ կը խորհրդանշէ ժողովրդավարութեան եւ ազատութեան յաղթանակը օտար տիրապետութեան եւ բռնակալութեան դէմ՝ ի խնդիր հայրենիքի անկախութեան եւ ազգի ազատութեան, որոնց պաշտպանութեան համար ոչինչ պէտք է խնայել, նոյնիսկ սեփական կեանքը:

Դասական ուրիշ օրինակ մը կը ներկայացնէ Թերմոփիլեսի ճակատամարտը Ք.ա. 480 թուականին: Սփարթակի թագաւոր Լէոնիտասի գլխաւորութեամբ յոյն ռազմիկներու փոքրաթիւ գունդ մը՝ ընդամէնը 300 քաջամարտիկ բաղկացած, կը դիմադրէ Քսերքսես Ա.ի առաջնորդած թէ՛ քանակով եւ թէ՛ սպառազինութեամբ գերակշռող ուժին: Թէեւ ետօրեայ այս ճակատամարտին ընթացքին սփարթակցիներ կը նահատակուին, սակայն Թերմոփիլեսի ճակատամարտը եւ սփարթակցիներուն հերոսական դիմադրութիւնը կը դառնան յոյներու արիւթեան եւ ազատասիրութեան խորհրդանշանը՝ դարձաբար ներշնչելով բանաստեղծներ, արուեստագէտներ, բազմաթիւ յեղափոխականներ եւ բռնութեան դէմ պայքարող ազատամարտիկներ:

Բայց ինչո՞ւ խորասուզուել օտար ազգերու պատմութեան էջե-

Գաղութիս Օրինակելի Տիկիճները

ԵՆՈՎՔ ՊԱԼԻՔԵԱՆ

Մարկարէթ Մկրուպլեան



Տիկին Մարկարէթ Մկրուպլեան հայ իգական սեռին արժանաւոր, կարկառուն եւ օրինակելի ազնուասիրտ հայուհի մըն է: Ես բարեբախտութիւնը չեմ ունեցած ճանչնալու զինքը: Մեր բանաստեղծին իմաստալից խօսքերը վերջի-չելով, թէ՛ «Մարդու գործն է միշտ անմահ», փափաքեցայ ներկայացնել այս ազնուական տիկինը, նկատի ունենալով անոր իրագործումները:

Տիկին Մկրուպլեան մասնագիտութեամբ մեքենագիտութեան եւ ճարտարագիտութեան երկրաչափ է: Իր քովնտի զբաղումները բազմազան եւ բազմաթիւ են, նաեւ գործադիր տնօրէնը եւ վաճառորդն է էլեկտրոնային արուեստի ընկերութեան: Իր ամուսինը՝ Տէյ-ուիտ Մկրուպլեան ընկերակից է 18 առեւտրական հաստատութիւններու եւ անշարժ կալուածներու գործակատար է:

Քլերմոնտ Մըք Քենա քոլեճի (CMC) փրոֆեսոր Ռոնրոթ 1970 թուականին սկսած էր դասախօսել Մարդու իրաւունքներու եւ Հոլոքոսթի մասին: 1999-ին փրոֆեսոր

ձոնաթան ֆեթրոփուլոս միացաւ անոր, եւ հաստատեցին CMC քոլեճի Մարդու իրաւունքներու կեդրոնը՝ CMC Center for Human Rights, որուն նպատակն էր սերտել Հոլոքոսթի եւ մարդու իրաւունքներու պաշտպան գործունէութիւնը: Տէր եւ տիկին Մկրուպլեանները իրենց անխոնջ ճիգերով համոզեցին, որ Հոլոքոսթի կողքին նաեւ աւելցնել Հայկական Յեղասպանութեան նիւթը:

Տիկին Մկրուպլեան տասէ աւելի ամերիկեան կազմակերպութիւններու վարչական է: Օրինակներ. քաղցկեղի դէմ նեցուկ կեցող ընկերութեան, Aid ծառայութեան կեդրոնին, Փաստախնայի համայնքի վարչութեան, Հարաւային Քալիֆորնիայի շրջանային խորհրդին եւ այլն: Ան նաեւ գործոն անդամ է բազմաթիւ հայկական կազմակերպութիւններու, ինչպէս՝ «Արմինիան էսեմպլի», Հայ տիկնանց միջազգային ընկերակցութեան, Հայկական թանգարանին, Հայ կրթրանոցին: Տիկին Մկրուպլեան այսօր քան պարտաւորութիւններու կողքին ժամանակը եւ միջոցները տրամադրած է օգնելու բարեսիրական կազմակերպութիւններու, Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաքելական եկեղեցիին եւ 22 տարիներ ուսուցիչ եղած է նոյն եկեղեցոյ կիրակնօրեայ դպրոցին: Նաեւ վարած է Արեւմտեան թեմի առաջնորդարանի ամառնային բանակատեղիի վերահսկիչի պաշտօնը: Տիկին Մկրուպլեանի հանգամանքը նկատի ունենալով, անոր անաղմուկ գործելակերպը ապացոյց է, որ ան համեստութեան մարմնացումն է:

Տէր եւ տիկին Մկրուպլեաններու առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ 2014-ին, Ապրիլ 24էն երկու շաբաթներ առաջ CMC ընկերակցութեան Մարդու իրաւունքներու կեդրոնը վերանուանուած է «Մարկարէթ եւ Տէյվիտ

Մկրուպլեան» անունով: Այս կեդրոնի նպատակն է ծանօթացնել Հոլոքոստի, Հայկական Յեղասպանութեան եւ այլ ջեղասպանութիւններու յիշատակը եւ պաշտպանել մարդու իրաւունքները: Պրն. Տէյվիտ Մկրուպլեան նշանակուած է այս կազմակերպութեան ատենապետ: Յատկանշական է այս առթիւ Մկրուպլեաններու կողմէ պրն. Տէյվիտի ըսած շնորհակալական խօսքը. «Ինչ որ դուք չէք գիտեր. այդ օրը, Ապրիլին, 100 տարիներ առաջ, Օսմանեան իշխանութիւնը Ստամպուլի մէջ ձերբակալած է 250 անմեղ հայեր՝ պատրուակ գտնելով, որ անոնք կրնան վտանգ եւ արգելք հանդիսանալ իրենց չարագործ ծրագիրին՝ հայերու զանգուածային ջարդերուն: Որոնք էին այս անմեղ հայ նահատակները, եթէ ոչ հայ մտաւորականները, հայ նշանաւոր հանրածանօթ առեւտրականները, հանգամանք ունեցող պետական աւագ պաշտօնեաները եւ արհեստաւորները: Կը փափաքինք, որ «Մարկարէթ եւ Տէյվիտ» մարդու իրաւունքներու այս կեդրոնը նկատուի մեր յարգանքի յուշարձանը՝ նուիրուած Հայկական Յեղասպանութեան նահատակներուն»:

Տէր եւ տիկին Մկրուպլեանները Հիմնադրամ մը հաստատած են, որուն միջոցաւ նպաստներ պիտի տրամադրուին բարեսիրական կազմակերպութիւններուն եւ միութիւններուն, որոնք իրենց սրտին մօտ են, վստահելի եւ օգտակար: Անոնց կատարած գնահատանքի արժանի բազմաթիւ բարերարութիւնները հասած են մինչեւ Պէյրութ, Լիբանան:

Մկրուպլեան ամուսին մեծութիւնը ի հայտ կու գայ իրենց շնորհալի գաւակներուն վկայութեամբ. «Իմ ծնողքս ինձի եւ քրոջս ներմուծեցին այն խորունկ զգացումը եւ նպատակը, որ պէտք է բարեսիրութիւններ, նուիրա-

տուութիւններ ընենք մեր համայնքին: Անոնց օրինակը ներշնչեց եւ սորվեցուց մեզի, թէ ինչպէս մեր ժամերը տրամադրելու, նաեւ ծառայելու ենք այն կազմակերպութիւններուն, որոնք վստահելի եւ օգտաշատ են մեր ազգակիցներուն»:

Թեմի Մելիտոնեան Նշանակուած է «Օսկար»ի Գլխաւոր Տնօրէն



Այս լուրը լրագրողական ընկերութիւններու կողմէ չաչտաչարուեցաւ բազմաթիւ տեղական թերթերու մէջ, ինչպէս նաեւ հայկական մամուլին մէջ:

Կը փափաքիմ ձեզի հաղորդել այս նշանակալից լուրին իմաստը եւ կարեւորութիւնը հայ իգական սեռին եւ համայն հայութեան համար:

Ամերիկեան այս ակադեմիան կը ղեկավարուի բոլորին ծանօթ, պողպատեայ պատերով պաշտպանուած փոքր իմբակի մը կողմէ:

Կրնա՞ք երեւակայել, որ թեմին, այս համեստ հայուհին կրցած է թափանցել այս պատէն ներս եւ մագլցել այս անհասանելի բար-

Շար.ը էջ 19


Հովանաորութեամբ
ԹԵՄԻՍ ԲԱՐԵՁԱՆ ԱՌԱՋՆՈՐԳ
ԳԵՐԸ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
Կազմակերպութեամբ

«ՁՈՒԱՐԹՆՈՅ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԵՈՒՄԻ

Շ Ն Ո Ր Հ Ա Ն Գ Է Ս

ՆՈՒԻՐՈՒԱԾ
ՍԻՐԱՆ ՍԵՉԱՅԻ «ՆԱՄԱԿԱՆԻ» ԳԻՐՔԻՆ

ՍԻՐԱՆ ՍԵՉԱ



ՆԱՄԱԿԱՆԻ
Ա

Գիրքը կը ներկայացնէ

Դոկտ. Մինաս Գոճայեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
ՊԱՏՇԱԾ ՀԻԲԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ
Չորեքշաբթի, 6 Մարտ 2024-ին, ժամը 19-ին
Առաջնորդարանի «ՀԱՄԱՐ» սրահին մէջ:
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է:
Հասցէ. 3325 N Glenoaks Blvd, Burbank, CA 91504



միջազգային կանանց տօնի առթիւ

SIP AND PAINT CHEESE AND WINE

MARCH 6 2024
8PM - 10PM
1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104

FOR RESERVATION
CALL AT +1(626)681-9455

DONATION FEE
\$45

«Արփի»ի Առաջին Փայլերը Գրախօսական Դեռ Լոյս Չտեսած Գիրքերու Համար

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Լոյս Անճելլա քաղաքի մէջ հիմնուած Արփի հրատարակչատունը փայլ մը կը խոստանայ սիրելի հայկական պատանեկան գրականութեան վրայ, ճիւղ մը, որ սփիւռքի մէջ նօսր է, եթէ համեմատուի մանկական եւ արուեստական գրականութեան հետ: Հայկական գրախանութիւններու մէջ սակաւաթիւ են արեւմտահայերէն, արեւմտահայերէն, պատմական կամ սիրային այն վիպակները, որոնք 12-18 տարեկաններու համար գրի առնուած են: Իսկ Արփի հրատարակչատան հիմնադրութիւնը այժմ պատճառ կը դառնայ, որ սփիւռքի սաստատուած հեղինակներ, ինչպէս նաեւ սկսնակներ, նոր ստեղծագործութիւններու ձեռնարկին այս նպատակով: Ուրախութեամբ տեղեկացնեմ, թէ առ այժմ երեք գիրք արդէն հեղինակութեան ընթացքի մէջ է: Այդ գործերուն անձնագին ծանօթ ըլլալով եւ գիտակցելով, թէ երկրորդական վարժարան յաճախող աշակերտներս մօտ ապագային զանոնք հաճոյքով պիտի ընթերցեն, այսօր փոխանակ բառի մը պատմութիւնը գրի առնելու, յարգելի ընթերցող, որոշեցի ձեզի հետ այդ գիրքերու մասին գրուցել:



«Վաղը ուշ չէ» Սիրավէպ ԼԵՆԱ ՉԱՐԿԻՐԻՔԻ, Պոլիս

Պոլսահայ ուսուցչուհի Լեոնան փոքր տարիքէն սկսած է գրել: Ան Տատեան եւ Սահակեան-Նունեան վարժարաններու սան է: Պոլսոյ Համալսարանի մէջ ուսանած է դասական բանասիրութեան լատինական գրականութեան մասնաճիւղը: Լեոնան ունի գրական բազմաթիւ ստեղծագործութիւններ. բանաստեղծութիւններ, պատմուածքներ, հեքիաթներ: Լեոնայի գործերը լոյս տեսած են Պոլսոյ հայկական մամուլին մէջ: Ունի առանձին հատորով հրատարակուած գործեր:

Արփի հրատարակչատան համար Լեոնան փափաքած է գրի առնել վիպակ մը, Լեոնայի խօսքով, «Նորահաս երիտասարդութեան հարցերուն եւ անշուշտ աւելի յետոյ լուծուածներուն վրայ»:

Լեոնայի գիրքին անունն է «Վաղը ուշ չէ»: Սիրավէպ մըն է ան: Պատմութիւնը տեղի կ'ունենայ Պոլսոյ մէջ: Մայր կերպարը Սանտրան է, 16-17 տարեկան աղջնակ մը: Երիտասարդուհին կը տառապի ընտանեկան պառակտումէ. «Մայրս, ինդճ կինը, ստիպուեցաւ ամուսնանալ այդ մարդուն հետ: Խորթ հայրս է ան: Բնաւ չեմ սիրեր զինքը, ան ալ՝ զիս»: Աղջնակը խաղաղ եւ բարեկեցիկ կեանքի մը

ցանկութիւնը ունի. «Գեղեցիկ տուն մը ունենայի... Որքան լաւ կ'ըլլար: Դրամ պէտք է որ շահիմ: Ինֆլուէնսը ըլլամ: Ինչո՞ւ չէ: Եթէ ես ալ աշխատիմ ու դրամ շահիմ, կը ճամբորդեմ, սիրելիս հետ ժամանակ կ'անցընեմ... Բայց սիրելի մը չունիմ»: Սանտրան կը տառապի նաեւ իր հանգուցեալ հօր անհանգստացնող յիշատակներէ. «Երեք տարի առաջ մեռաւ հայրս: Նոյնիսկ եթէ ապրէր, օգուտ մը չունէր: Հայրիկս իման մըն էր եւ ընդհանրապէս գինով տուն կը վերադառնար: Տան պոռչուածքները բնաւ չէին դադար: Ամբողջ շէնքը կը լսէր մօրս, հօրս աղաղակները: Ես այն միջոցին կ'առանձնանայի սենեակիս մէջ ու ականջներս կը փակէի: Բարձին մէջ կը թաղուէի, որպէսզի բան մը չիմանայի»: Սանտրան ունի զօրաւոր կամք, իր կեանքը կանոնաւորելու ոյժ. «Առանձին պիտի պայքարիմ եւ անպայման ելք մը պիտի գտնեմ»: Պատմութեան մէջ կը տեսնեք նաեւ դասընկեր Մայքը, բարեկեցիկ ընտանիքի մը գաւակը: Ընտանեկան հոգատարութեան մէջ մեծցած է այդ պատանին: Մայքը եւ Սանտրան իրարու հանդէպ սիրոյ զգացումներ կը փայփայեն: Օր մը Սանտրան կը հասնի գովեցերք, նշանակուած ժամադրավայրը: Մայքը դէպի հորիզոն մենախօսելով բանաւոր խոստովանանքի փորձ կը կատարէ, առանց նկատելու, թէ Սանտրան իր ետեւն է. «Սանտրա՛, սիրելի ըլլա՞նք... Սանտրա՛, հոգիս, կ'ուզեմ, որ սիրելի ըլլանք... Սանտրա՛, երկար ատեն է ի վեր շատ կը հաւնիմ քեզ, կը փափաքիմ, որ սիրելիս ըլլաս...»: Երկուքը կ'որոշեն յաջորդ օր շոգեկառք նստիլ, հեռանալ եւ կերտել ապագայ մը.

Շոգեկառք մը կը ցատկենք եւ ուրիշ տեղ մը կ'երթանք, ուրիշ քաղաք մը, ուրիշ երկիր մը:

Ե՞րբ:
Վաղը:
Սիրելիդ եմ:
Սիրելիս ես:

Բայց, կեանքը ունի անակնկալներ: Պատմուածքի աւարտին անոնց կեանքը պիտի առնէ բոլորովին տարբեր ուղղութիւն մը:



«Վեցնտիկի Նաւարանից Երեք Գերիները» Արկածախնդրական վէպ ԱԻԵՏԻՍ ՀԱՃԵԱՆ, Վեցնտիկ

Հայկական Աւետիսը այժմ կը բնակի Վեցնտիկ: Լրագրող է ան: Աշխատակցած է Պուէնոս Այրէսի La Prensa օրաթերթին, Միացեալ Նահանգներու մէջ CNN-ին, Bloomberg News-ին, The Wall Street Journal-ին, Los Angeles Times-ին եւ Le Monde Diplomatique-ին: Հե-

ղինակն է «Secret Nation: The Hidden Armenians of Turkey» («Գաղտնի ազգ. Թուրքիոյ թաքուն հայերը») գիրքին: Միթարեան Միաբանութեան Սուրբ Ղազար մայրավանքի մէջ լեզու եւ պատմութիւն կը դասաւանդէ:

Հաճեանի գիրքը արկածախնդրական վէպ է, ուր միջնադարու երեք հայեր կը յայտնուին մերօրեայ Վեցնտիկի մէջ ցուցադրուող պատմական առագաստանաւու մը մէջ:

Պատմութիւնը տեղի կ'ունենայ 2015 թուականին: Փետրուար է. Վեցնտիկ քաղաքը հանդիսապէս տօնած է բարեկենդանը ու հիմա կը պատրաստուի նաւային պատմութեան մեծաշուք ցուցահանդէսի մը: Լիզան, ցուցահանդէսին պատասխանատու հնազանդ, սրահ եկած է վերջին ստուգումները կատարելու: Այդ պահուն, յանկարծ, առագաստանաւու յատակէն, ժպտաղէմ, ցնցոտիներ հագած երեք հօգի կը յայտնուի: Գինով են: Անոնք օտար լեզու մը կը խօսին, հագած են հնադարեան տարազներ: Թանգարանի ապահովութիւնը կը հասնի: Ոստիկանները կը կարծեն, թէ բարեկենդանի կատակ մըն է ասիկա. «Պահակները սկսան խնդալ. անոնք ենթադրեցին, որ Վեցնտիկեան Բարեկենդանի խնճոյքի գինովցածներ էին, որոնք, հնարամիտ ընկերներ, ձեւը գտած՝ նաւուն մէջ գիշերած էին: "Evviva il Carnevale!", եւ դարձեալ խնդացին. «Կեցցէ՛ Բարեկենդանը»: Լիզան այլ կարծիք ունի. «Անոր հնազանդ աչքերը նշմարած էին մանրամասնութիւններ, որոնք միւսներուն ուշադրութենէն վրիպած էին: Sono armeni! Sono armeni! Հայ են: Հայ են»: Երեք ընտերկերը սարսափով կը դիտեն տեսարանը: Անոնք զարմացած կը նային աղջկան. «Յովոյին աչքերը Լիզային յարած էին, ո՛չ միայն անոր գեղեցկութեան, այլ նաեւ դիմաչարդարումի, հագուստներու, խոշոր, փայլուն ոլորապտոյտ օղբու համար»: Սկիզբը

Լիզային ըսածները չեն հասկնար, բայց վերջը կ'անդրադարձան, որ երիտասարդ կինը հայերէն կը խօսէր: «Աշտու, որ իր գիւղի եկեղեցուց մէջ մոմակալ եղած էր եւ երեքին մէջ լաւագոյն հայերէնը կը խօսէր, սկսաւ դանդաղօրէն բառեր արտասանել»: Դժբախտաբար Լիզան հայոց լեզուի քաջ տիրող մը չէ, բայց կ'ըմբռնէ, թէ արտակարգ վիճակի մը առջեւ կը գտնուին. Սուրբ Ղազարէն Հայր Խաչատուրին կը հեռաձայնեն, կը խնդրեն, որ գայ: Ան շատ դժուարութեամբ կը յաջողի հաստատել. «Այս երեքը Մշոյ եւ Սասնոյ բարբառ կը խօսին»: Սակայն առեղծոածը կը խորանայ, երբ երեքն մէկը, Աշտու, կ'ըսէ, որ Միսի կաթողիկոսէն նամակ բերած են: Հայր Խաչատուրը, Լիզան եւ ոստիկանութիւնը շուտով կ'անդրադառնան, թէ անհասկնալի հանելուկի մը առջեւ կը գտնուին»:



«12րդ Սալիկը» Վիպակ ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ Լոյս ԱՃՆԵՐԱ

Պոլսահայ Նորայրը այժմ կը բնակի Լոյս Անճելլա: Հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ է: Պոլսոյ մէջ յաճախած է Միթարեան վարժարան: Պողոզիչի հա-

Շար.ը էջ 19

Նոր Գիրքեր

Ճորճ Յակոբեան

Կորցրած Հողի Կարօտը (Իմ Սրտի Խօսքը) Գիրք 3

Ճորճ Յակոբեանի վերոյիշեալ գիրքը՝ կը բաղկանայ 112 էջերէ եւ լոյս տեսած է 2023-ին, Երեւանի Յասոն հրատարակչութեան տպարանէն:

Հեղինակը՝ ծանօթ հրապարակազոր եւ հասարակական գործիչ Ճորճ Յակոբեան, իր այս երրորդ գիրքով, հիմնականին մէջ կ'անդրադառնայ հայկական տարածքներու շարունակական կորուստներուն եւ կը վերլուծէ անոնց պատճառները:

Ճորճ Յակոբեան իր մտորումներուն եւ խոհերուն մէջ, յատկապէս Արցախի հարցով ցաւ ու մորմոք կը յայտնէ տառապալից հայ ժողովուրդի կրած զրկանքներուն մասին: Ան ժամանակակից քաղաքական իրավիճակին անդրադառնալով՝ կ'ըսէ «...Ուխտագրուած Ռուսաստանի փէշի տակից դուրս չենք գալիս, մինչեւ ե՞րբ: Եւս մի նոր եղեռն ենք սպասում՝ ձեռքներս ծալած, մինչեւ երբ: Յաղթանակը պարտութեան վերածեցին հայ ստահակն ու դաւաճանը:

Սոյն գիրքին մէջ հեղինակը տասնեակ մը լուսանկարներու միջոցով, տեղեկութիւններ կու տայ իր ունեցած այցելութիւններուն եւ քաղաքական այժմէական հարցերու՝ ՄԴՀԿ-ի, Արցախի, Նախիջեւանի եւ Ուքրանիոյ մասին: Գիրքի վերջաբանին վերջին նախադասութիւնն է. «Եկել է հայի արարման ժամը, ի գործ հայրդիներ:

ԶՈՐՃ ՀԱԿՈԲԵԱՆ
ԿՈՐՑՐԱԾ ՀՈՂԻ ԿԱՐՕՏԸ (ԻՄ ՍՐՏԻ ԽՕՍՔՐԸ)
Գիրք 3
Երևան 2023

Հայաստանի Շուկայ Պոլսոյ Սեջ Հրանդ Տինք Վարժարան



ԼԻԼԻԹ ՊՕՂՈՍԵԱՆ*

2023-2024 ուսումնական տարեշրջանի Սիրոյ Սեղանը՝ ի նպաստ կատարված «Հրանդ Տինք» վարժարանին, որ արդեն քսանամեայ տարեգրութիւն մը ունի Պոլսոյ ստեղծած պատմութեան վերջին քառորդին մէջ, տեղի ունեցաւ Փետրուար 4, 2024-ին, Գումգաբուի Աթոռանիստ Մայր եկեղեցիին մէջ: Ս. Աստուածածին եկեղեցւոյ զանգակները կը դողանջէին ու տաճարը կը կանչէին բոլոր անոնց, որոնք Գումգաբու եկած էին Հրանդ Տինք Հայաստանեան դպրոցի տարեկան մատաղօրհնութեան եւ Սիրոյ Սեղանին առիթով:

Վարժարանի ամբողջ ընտանիքը՝ Բարերարներ Տէր եւ Տիկին Արթո եւ Դալար Հորոզօղլու, Վեր. Գրիգոր Աղապալօղլու՝ Հովիւր կէտիկ Փաշայի Հայ Աւետարանական եկեղեցիին, Դպրոցի Վարիչ, ուսուցչական կազմ, պաշտօնեաներ, աշակերտ ու ծնողներ հաւաքուած էին Մայր եկեղեցւոյ երգիքին տակ ու կը հետեւէին արարողութեան, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Պոլսոյ Հայոց Պատրիարք Սահակ Բ. Արքեպիսկոպոս Մաշալեան Սիրոյ Սեղանի միջոցառումին ըսաւ. «Հրանդ Տինք վարժարանի առաքելութիւնը բացառիկ է Պոլսոյ միւս 16 վարժարաններու կողքին, որովհետեւ ան ՀՀ կրթական ծրագիրն է որ կ'իրականացնէ, եւ այստեղ ապրող Հայաստանցի աշակերտներուն կը պատրաստէ իրենց կրթութիւնը շարունակելու Մայր Հայրենիքին մէջ: Այս գաւազները մեր գաւազներն են, եւ հետեւաբար պարտաւոր ենք իրենց համար ապագայ պատրաստել:

Հաւանաբար ոչ Ֆրանսայի եւ ոչ ալ Ամերիկայի մէջ նման վարժարան մը գոյութիւն ունի... Բայց Պոլսոյ մէջ կ'այ: Այս ինքնին Պոլսոսահայութեան կրթական աւանդութիւններուն համար շատ լաւ վկայութիւն մըն է: Այս Պոլսոյ Հայութեան իրագործած ազգային ծրագիրն է:

Նայեցէ՛ք՝ մէկ կողմս Հայր Վարդանն է՝ Հայ Կաթողիկէ համայնքը կը ներկայացնէ, իսկ միւս կողմը՝ Վեր.Գրիգոր Աղապալօղլուն՝ Հայ Աւետարանական համայնքը կը ներկայացնէ, եւ ես՝ որպէս Պատրիարք մեր Առաքելաւան համայնքը կը ներկայացնեմ: Մենք բոլորս մէկ ենք՝ Հայ ենք, նոյն ճակատագիրը ունինք, ազգին կը ծառայենք, հետեւաբար մեր այս եկեղեցիներու եւ աւանդութիւններու առկայ տարբերութիւնը չ'ազդէր, որ մենք այս հասարակական յայտարարի վրայ միասնաբար մեր

ազգային ծրագիրները իրագործենք:

Այս վարժարանը իւրայատուկ է, որովհետեւ անկարելին կարելի դարձաւ:

Այս առումով իմ յիշատակներս վարժարանի հիմնադիր-տնօրէն տիկին Հերիքնազ Աւագեանի հետ են: Երբ ես կատարեցի Վեր. Գրիգորի հովիւն էի, հոն եկած էր ան եւ մեզմէ սենեակ մը կ'ուզէր, բայց այդ սենեակը այդ գործին համար տրամադրելը դիւրին չեղաւ: Թաղային Խորհուրդը կը մտածէր օրինական խնդիրներու վերաբերեալ: Այդ միջոցին կատարեցի Հայ Աւետարանական եկեղեցին իր դռները բացաւ, որովհետեւ այդ եկեղեցին ունի քաջ հովիւ մը՝ յանձին Վեր. Գրիգոր Աղապալօղլուն:

Ես սրտանց կը քաջալերեմ եւ կը շնորհակտըմ իր քաջութիւնը, որովհետեւ ճակատագրական պահեր կան, որ երբեմն մարդ պէտք է խելքին դիմէ, այլ սրտին: Ուրեմն ինքը այդպէս վարուեցաւ եւ տեսակ մը թէ՛ իրեն համար, թէ՛ Հայ Աւետարանական համայնքին համար եւ թէ՛ կատարեցի Հայ Աւետարանական եկեղեցիին համար դարաշրջան մը բացաւ եւ մինչեւ այսօր այս սուրբ գործը կը յաջողի: Եւ մենք հոս ենք որպէս համայնք եւ որպէս Պատրիարքարան՝ գործի սկիզբէն ի վեր, որովհետեւ մենք կը հասկնանք, որ այս գործը սա կամ նա մարդուն գործը չէ:

Այնպէս որ Պոլսոյ հայութեան բարերարներէն Արթո եւ Դալար Հորոզօղլուի անձին մեջ գտած է ներկայացուցիչներ, եւ ուրեմն իրենք ալ այս խենթ գործին մասնակցած են եւ իրենք ալ ձեռք մեկնած են՝ տէր կանգնելով մեր գաւազներուն իրենց խնամակալութեամբ:

Քսան տարիներ անցան վարժարանի հիմնադրութենէն, եւ միայն Աստուած գիտէ անոր ապագան: Մենք մեր հաւատքով այս գործը Աստուծոյ ձեռքերուն կը յանձնենք:»

Վեր. Գրիգոր Աղապալօղլու իր խօսքին մէջ նշեց որ «Հրանդ Տինք վարժարանը փոքրիկ Հայաստան մըն է, ուր շուրջ 20 տարի՝ ամէն օր դպրոցի յարկին ներքեւ աշակերտներ կը վայելին Հայաստանի շունչը:»

«Հայ Աւետարանական համայնքի հերոսական պատմութիւնը, Քէմբ Արմէնէն սկսեալ մինչեւ Հրանդ Տինք վարժարան», ըսաւ Ջաւէն Խանճեան, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան Գործադիր Տնօրէնը:

* Լիլիթ Պօղոսյան Հրանդ Տինք վարժարանի վարիչն ու ուսուցիչներէն մէկն է:

Ռուսները Եկել Էին

Շարունակուած էջ 2-էն

է նման քայլի գնալ, փակել պարտքերը Ռուսաստանի հետ, բայց թուրքիան հագիւ թէ գնայ այդ քայլին: Թուրքիան ՌԴ խամաճիկը չէ, ինքն էլ եթէ նման ցանկութիւն ունենայ, ապա հիմա էլ կարող է դա անել, ու դա բացարձակ կախուած չէ Հայաստանի վարած արեւմտամէտ քաղաքականութիւնից: Հետեւաբար մեզ թուրքիայով վախեցնելու այս դարաւոր մեթոդը հնացած է, ինչը Ռուսաստանում դեռ չեն հասկացել: Եւ ահա Սուլտովը յայտարարում է, որ Ռուսաստանում յոյս ունեն, որ հայ հասարակութիւնը կ'արթնանայ ու յեղափոխութիւն կ'անի:

«Կարծում եմ՝ Ռուսաստանում յոյս ունեն, որ Հայաստանի անվտանգային իրավիճակի վատթարացումը գուզահեռ հայ հասարակութիւնը եզրակացութիւններ կ'անի ու ներքաղաքական գործընթացների միջոցով կը փոխի վարուող արտաքին քաղաքականութիւնը», - ասում է Սուլտովը: Սուլտովը չաջորդ «կուտն» է փորձում տալ հայերին՝ կրկին թուրքերով վախեցնելով: Ասում է՝ եթէ Հայաստանը Ռուսաստանի հետ լաւ յարաբերութիւններ ունենայ՝ թուրքիայի եւ Ատրպէյճանի կողմից Հայաստանի վրայ յարձակման հնարաւորութիւնը կը մօտենայ գրոյչի, հակառակ դէպքում այդ ռիսկերը կը բարձրանան:

Եւ ահա, վերջապէս, այդ քննարկման ընթացքում եզակի հայկական տեսանկիւն է յայտնուում՝ ի պատիւ Ալեքսանդր Իսկանդարեանի, որի հարցին՝ եթէ Ռուսաստանը մեզ ասում է, որ մեզ հիմա գէնք չի կարող վաճառել, որովհետեւ այդ գէնքը իրեն Ուք-

րանիայում է պէտք, ի՞նչ պէտք է անի Հայաստանը, կերակրուի՝ «դուք դիմացէք, մենք մի օր կը վերադառնանք» լոգունգո՞վ, ի պատասխան Սուլտովն ասում է, որ պատերազմի աւարտից յետոյ Ռուսաստանը շատ գէնք կ'ունենայ, կը մատակարարի՝ ըստ հուլիանի Հայաստանին առաջարկելով դիմաւարտ մասին այդ մեղավեղեւան լոգունգը: Իսկ միւս ուսու հիւրը՝ ռազմական փորձագէտ, այլ յոյս է տալիս, որ վաղ թէ ուշ տեղի է ունենալու Ռուս-թուրքական պատերազմ եւ ահա հայերը կարող են շահել դրանից՝ ըստ հուլիանի կրկին նոյն առաջարկն անելով՝ «դուք դիմացէք, մենք կը վերադառնանք՝ մի օր»: Իսկ հայ անյայտ փորձագէտներից մէկն էլ ռուս փորձագէտներին բողոքում է, որ Ռուսաստանում բաւականին խիստ չեն Հայաստանի եւ Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ:

Պեսկովն, օրինակ, Փաշինեանի յայտարարութիւններին ի պատասխան ասում է, որ կը սպասեն հայ գործընկերների պարզաբանումներին, ու հայ վերլուծաբանը հարցնում է ռուսներին. «էլ ի՞նչ պէտք է տեղի ունենայ, որ ռուսական կողմը հայ գործընկերներից յստակեցումներ չսպասի: Ռուսական 102-րդ բազայում պէտք է գազը, հոսանքն ու ջուրը անջատե՞ն, որ ռուսական կողմի համար պարզ լինի»:»

Ահա այսպիսի շղաճգումների մէջ են հայ վերլուծաբան/քաղաքագէտ/փորձագէտները: Վերջում էլ կրկին ելոյթ է ունենում տավարիչ Խաչիկեանը, բայց որքան էլ որ ես յղի կին չեմ, այնուամենայնիւ այդքան պինդ նեարդեր էլ չունեմ մէկ օրուայ ընթացքում այդքան լսել այդ մարդուն:

«ՍԻՎԻՔ»

Ինչու «Ալիեի Որսորդը» Ուղարկուեց

Շարունակուած էջ 2-էն

Ի պատասխան Հռոմի ստատուտին միանալու որոշման եւ դաշնակից երկրից «Երես թեքելու»: Այդ ակտը միաժամանակ կարող է վկայել ՌԴ-Ատրպէյճան գործարքի մասին յատկապէս առաջիկայում նախանշուած ՀՀ-Ատրպէյճան բանակցային ռաուտորից առաջ:

Ալիեը, ենթադրաբար, կը փոխհատուցի ՌԴ-ին նման «մեծահոգի» ժեստի համար, դիցուք՝ արեւմտեան միջնորդութեան պոչքտը՝ շարունակելով, ՀՀ-ի հարաւային սահմանների վրայ հերթական դիվերսիոն յարձակումը կազմակերպելով, եւ/կամ հերթական մաքսիմալիստական պահանջները ՀՀ-ին ներկայացնելով՝ շարունակելով վիժեցնել խաղաղութեան գործընթացը:

Յատկանշական է, որ դաշնակից երկիրը իւրօրինակ թաքստոց ու ապաստան է տարբեր յանցանքների համար մեղադրուող եւ մասնաւորապէս ՀՀ-ի կողմից հետախուզուող ՀՀ քաղաքացիների համար եւս:

Մասնաւորապէս ՌԴ-ում են պատսպարուել պաշտպանութեան նախկին նախարար, «Մարտի 1»-ի գործով մեղադրուած Միքայէլ Յարութիւնեանը, նախկին գլխաւոր դատախազ, «Մարտի 1»-ի գործով միանգամից 5 յօդուածով որպէս մեղադրեալ ներգրաւուած Գեորգ Կոստանեանը, կոուպչիոն բնոյթի յանցագործութիւնների համար մեղադրուող Դատական ակտերի հար-

կադրի կատարման ծառայութեան նախկին պետ Միհրան Պօղոսեանը, «Մարտի 1»-ի գործով քննչական խմբի նախկին ղեկավար Վահագն Յարութիւնեանը, նախկին ղեկավար Միքայէլ Մինասեանը եւ այլք:

Նկատենք, որ «Մարտի 1»-ի գործով մեղադրեալ Վահագն Յարութիւնեանը 2020-ի Մարտին ազատ էր արձակուել, քանի որ, ըստ ռուսական օրէնսդրութեան, նրան մեղադրուող արարքի վաղեմութեան ժամկէտն անցել էր: Հետախուզուող Միհրան Պօղոսեանին ՀՀ իրաւապահներին յանձնելու միջնորդութիւնը նոյնպէս մերժուել է՝ ՌԴ-ում վերջինիս կողմից փախստականի կարգավիճակ ձեռք բերելու դիմում ներկայացնելու հիմքով: ՌԴ-ն հրաժարուել է արտայանձնել նաեւ Միքայէլ Յարութիւնեանին՝ վերջինիս ՌԴ քաղաքացի հանդիսանալու պատճառաբանութեամբ: Գեորգ Կոստանեանի հետախուզումը ՌԴ տարածքում նոյնպէս չեղարկուել է: Նա, ի դէպ, 2019-ին պայմանագիր էր կնքել, ուշադրութիւն, ՌԴ գլխաւոր դատախազութեան համալսարանի հետ եւ ըստ պայմանագրի, պէտք է վերապատրաստման դասընթացներ մատուցեր ռուսնորդներին եւ դատախազներին: «Երկիր Մեղրայ»-ին տուած հարցազրոյցում խոստացել էր պայմանագրային պարտաւորութիւնները կատարելուց յետոյ վերադառնալ ՀՀ, սակայն... դեռ գալիս է:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԳԻՈՐԳ ԹԱԻՈՒԳՁԵԱՆԻ մահուան առթիւ հանգուցեալի այրին՝ Տիկ. Մարալ Թաւուզճեան եւ անոր 3 դուստրերը՝ Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Ալիս Պաթթա, Տէր եւ Տիկ. Սապրի եւ Օթէնի ձըրճս եւ Նանօր Թաւուզճեան իրենց շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից եղան իրենց սուգին, այցելութեամբ, հեռաձայներով, ծաղկեպսակներով եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով: Առ այդ Տիկ. Մարալ Թաւուզճեան եւ իր ընտանեկան անդամներով \$1000 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

Քեալլա Նիկողոսը

Շարունակուած էջ 125

Քում կարողացել է զաղթականի կարգավիճակով հաստատուել Միացեալ Նահանգներում:

Գրեթէ տաս տարի է, որ հոս կ'ապրիմ: Հոս հաստատուելիս ի վեր, հետեւած եմ գործունէութեանդ, սակայն, խոստովանիմ, չեմ համարձակած հանդիպիլ քեզի:

Ինչո՞ւ, Նիկօ, ինչո՞ւ չես հանդիպած:

Ի՞նչ ըսեմ Հենրիկ, անցեալի սխալներու պատճառով ամէջած եմ հանդիպիլ քեզի: Հոս երգիպարի խումբիդ համերգին ալ ներկայ եղած եմ: Եւ քանի որ հիմա հանդիպեցանք, կը խոստանամ հետ այսու հանդիպիլ:

Եւ իսկապէս էլ, Նիկոն մի քանի օր յետոյ երեւաց մեր տան շէմին: Ինչպէս երբեք, այս անգամ մի շքեղ ծաղկեփունջ կար ձեռքին:

Այս ինչ լաւ, հանգստաւէտ տուն է, մեղք որ Հոլիվուդի մէջ է, չէ՞ք մտածեր տեղափոխուիլ աւելի ապահով շրջան մը, շատ մտերիմ մարդու հոգածութեամբ ու ազնիւ մղումով ասաց նա:

Ոչ, Նիկօ, մենք շատ ենք սիրում մեր թաղը, արեւելահայերէնի անցնելով ասացի ես ու շարունակեցի, դու այն ասա, շուտով կաղանդ է, չե՞ս փափազում արդեոք քսան տարուայ խոստով կատարել՝ դեռ կաղանդը չեկած, կատակով ասացի ես:

Ի՞նչ խոստում, իրեն չհասկա-

նալու տալով պատասխանեց Նիկոն: Չե՞ս հիշում..., քեալլան, գովածդ ոչխարի քուլուխը ..., որ կաղանդից մէկ շաբաթ առաջ պիտի վայելէինք մեր տանը:

Հա՛... այ՛, յիշեցի, բայց հո՞ւս, Ամերիկայի մէջ... վայրենիի տեղ կը դնեն մեզի: Հոս լաւ, մասամբ ուր փաշա կը ծախեն: Թոյլ տուէք, որ խոստումս կատարեմ փաշայով, պայմանով՝ այս հիւանալի տանին մէջ: Ես հոս միտակ կ'ապրիմ: Հոս նոր կնիկ մը առի, մէկ տարին չլրացած՝ փախաւ: Նախկինը դիտես, Հենրիկ, բ...ին մէկն էր:

Կատակ արի Նիկօ, հոգ մի անի, մենք խաշ կղնենք եւ դու մեր հիւրը կ'լինես, լա՛ւ...:

Գրեթէ մէկ տարի Նիկոն եկաւ զնայց մեր տուն: Ինչպէս միշտ՝ ընթրիքի ժամերին, եւ ամէն անգամ, հրաժեշտ տալիս մի ուտելիք, մի խմիչք անպայման տանում էր իր հետ: Պատահեց նոյնիսկ, որ մեկնելիս մէկ գլուխ սոխ եւ կարտոֆիլ վերցնի իր հետ՝ «կը ներէք, պետք ունիմ» մըմնջալով:

Երկու տարի յետոյ Նիկոն չքացաւ ասպարէզից: Ոչ տունը գիտէինք եւ ոչ էլ աշխատանքի վայրը:

Մրանից-նրանից իմացանք, որ Նիկոն գնացել է Մոսկուա, ինչ որ մի ուսուցիչի հետ ամուսնանալու: Հաւանաբար, այնտեղ էլ մնացել է:

Նիկոն մեր յիշողութեան մէջ մնաց իր քեալլայով, որի ոչ տեսքը տեսանք, ոչ էլ համը վայելեցինք:

Գաղութիւն Օրինակելի Տիկինները

Շարունակուած էջ 14-էն

ձուռքին՝ տիրանալով «Օսքար»-ի գլխաւոր տնօրէնի նախանձելի պաշտօնին:

Ամերիկայի այս ակադեմիան ունի համաշխարհային 10,500 անդամներ, 225 երկիրներու մէջ մօտաւորապէս 800-900 միլիոն հանդիսատեսներ (լսարան), եւ այս բոլորը պիտի իմանան, որ «Օսքար»-ի տնօրէնը հայ մըն է (Armenian)։ սքանչելի ծանօթացում, հպարտութիւն հայ իգական սեռին եւ համայն հայութեան:

Թենին գաւակն է ողբացեալ Գարեգին Մելիտոնեանին, որ ՀԲԸ Միութեան Լիբանանի եւ թէ՛ Հարաւային Ամերիկայի Քայիֆորնիոյ վարչութիւններուն մէջ գործունեայ անդամ եղած է, մասնաւորապէս երգ ու պարի համոյթի պատասխանատու գործադիր վարչականը: Իսկ ազնուափայլ տիկին Եփրուհի Մելիտոնեան՝ փորձառու առեւտրական էր եւ ողբացեալ ամուսնոյն պահապան հրեշտակը:

Թենի Մելիտոնեան համեստ, լուրջ, սակաւախօս եւ բացառիկ վարչական կարողութիւններով օժտուած հայուհի մըն է: Ան իր փոքր տարիքէն ուշիմ, ուժական ըլլալով՝ դարձած է տան անուշիկ իշխանուհին եւ ընկերակիցը իր մօրը: Թենիին եղբայրը Bank դրա-

մատան տնօրէն է եւ կը ճանչցուի կրէկ Մելիտոնեան անունով: Թենին եւ Հրակը անբաժան բարեկամներ են, իրենց մօրը պահապանը եւ երջանկութեան եւ հպարտութեան աղբիւրը:

Այժմ լսենք Թենիին վկայութիւնները.

«Իմ ծնողքը ճիգ չէն խնայած, որ մենք ըլլանք միշտ ուրախ եւ կենքի մէջ յաջողած անձնաւորութիւններ: Խիստ պատուիրած են, որ պահպանենք մեր հայ մշակույթը եւ ժառանգութիւնը ու անպայման միշտ հայերէն խօսինք: ՀԲԸ Միութեան կրթութեան ստացայ եւ մասնակցեցայ ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի «Նուպար» բանակատեղիին մէջ փորձառարական աշխատանքի (Internship)՝ «Համաշխարհային առաջնորդ» ծրագրին առաջնորդութեան: Հոն սորվեցայ, որ արդար նպատակի մը, բարեգործութեան, արուեստի, մշակույթի ու համայնքի մը պատկանելի կարեւոր նշանակութիւն պիտի ունենայ մեր զարգացման մէջ:

Մայրս միշտ կ'ըսէր ու կը շեշտէր. «Կարեւոր է հետեւողականութիւնը, միշտ պատրաստ ըլլալը դիմագրաւելու ամեն կարելիութիւններ եւ յարբերիլ ամէն անձերու հետ որ կը հանդիպիք»:

Համոզուած եմ, որ մօրս խրատին հետեւիլս պատճառ եղաւ, որ

«Արփի»ի Առաջին Փայլերը

Շարունակուած էջ 16-էն

մալարանի մէջ ուսանած է իմաստասիրութիւն: Ան խմբագրական կազմի անդամ եղած է Միութեան Սանուց Միութեան «Նոր Սան» գրական-գեղարուեստական հանդէսին: Նորայրը գրի կ'առնէ հայկական բառերու պատմութեան նուիրուած շաբաթական յօդուածներ՝ «Բառերու խորհրդաւոր աշխարհը»:

Արփի հրատարակչատան համար Նորայր առաջին անգամ կը ձեռնարկէ վիպակի մը հեղինակութիւնը: Գիրքին անունն է «12րդ Սալիկը»: Գիրքամեջի դիւցազնավէպին մերօրեայ տեղայնացումն է ան: Գիրքի գլխաւոր հերոսը, 13 տարեկան, ընթերցասէր, հեզ եւ նազը սիրող Տերեւն է. «Ես շատ դժուար կ'արթնանամ: Գպրոցական օրերը նկատի ունիմ: Նախ մօրս ձայնը կը լսեմ. Տերեւ, Տերեւ... Յետոյ անունս տան մէջ կը հնչէ աւելի քաճախ, աւելի սաստիկ եւ աւելի բարձրաձայն: Անօգուտ: Հակառակ մօրս բոլոր ջանքերուն՝ կը մնամ անկողինիս մէջ: Կը փորձեմ վերջին երազս շարունակել: Յետոյ հօրս ձայնը կը թնդացնէ սենեակս. Տե՛րեւ: Ծանր շարժումներով կ'ելլեմ: Այնքան ուշացած կ'ըլլամ, որ հայրս արդէն ինքնաշարժը աշխատեցնած, գիս կը սպասէ փողոցի մէջ: Բան մը մոռցած կ'ըլլամ: Ես կ'եթամ, ես կու գամ: Հայրս, «Բարի կէսօր», կ'ըսէ: Գպրոց հասնող վերջին ինքնաշարժը մենք կ'ըլլանք: Ու ես, դպրոց կը մտնեմ, հանդիսապէս, ինչպէս համերգի մը աստղը որ բեմ կ'ելլէ միւս բոլոր երգիչներէն յետոյ»:

Տերեւը ընթերցասէր է, ունի վառ երեւակացութիւն, յաճախ կը կարդայ դիցաբանական վիպակներ. «Ես կ'ուզեմ հնդիկ Շիվային նմանիլ. ունենալ չորս թիւ եւ չորս տաղանդ: Երբեմն ինքզինքս կը նկարեմ չորս ձեռքով: Ամէն մէկուն մէջ բռնած կ'ըլլամ սիրած զբաղումիս առարկան. գիրք՝ ընթերցանութեան համար, շերտի՝ խոհարարութեան, վրձին՝ նկարչութեան,

հակիթ՝..., մոռցայ ձեզի ըսելու, թէ ես երեք հատ ալ հաւ ունիմ»:

Կը ծանօթանանք նաեւ Շանթին, դասընկեր, յաղթանդամ սղայ մը, որուն համար մեծ հաճոյք է Տերեւին ահաբեկել, ինչպէս կաւէ 12 սալիկներու վրայ գրուած յայտնի պատմութեան մէջ ամեհի Գիլգամէշը, Միջագետքի Ուրուք քաղաքի թագաւորը, կը սարսափեցնէ իր հպատակները, կ'արհամարհէ նոյնիսկ աստուածներու հրահանգները:

Օր մը Տերեւին անարի գիրքը կը դառնայ Գիլգամէշի դիւցազնավէպը՝ բաժնուած 12 սալիկներու: Աղջնակը ամէն գիշեր սալիկ մը կը կարդայ, ապա լուսամտիցը կը մարէ ու կը քնանայ, առանց կասկածելու, թէ պատմութեան դէպքերը յաջորդ օր դպրոցի մէջ նոյնութեամբ պիտի կրկնուին. «Գիլգամէշի դիւցազնավէպը հետաքրքրական կ'երեւի: Վախազու է Գիլգամէշը: Գանգուր երկար մագ: Գանգուր երկար մօրուք: Հաստ բազուկներ: Հաստ գոյգ մը սրունք: Վրդէն բռնած է առիւծ մը: Խեղճը կարծեմ խեղղամաս եղած է, կամ յանձնուած է Գիլգամէշին: Ո՞վ է այս մարդը, մա՞րդ, թէ աստուած: Յուսամ ես այս գիշեր երագիս մէջ ո՛չ Գիլգամէշին, ո՛չ ալ Շանթին կը տեսնեմ: Շատ չար են... Ես այս գիշեր լուսամտիս պիտի չմարեմ»: 11րդ սալիկի աւարտին Տերեւը կ'անդրադառնայ այդ երեւոյթին: Իսկ 12րդ սալիկի աւարտին կը մարէ լուսամտիցը ու հանգիստ կը քնանայ: Ան պատրաստ է յաջորդ օր համարձակօրէն դպրոց երթալու, որովհետեւ սորված է, թէ ինչպէս Շանթին պիտի վերածէ բարի ընկերոջ մը, ինչպէս Գիլգամէշը դարձաւ բարեսիրտ արքայ՝ պատմութեան աւարտին:

Յաջողութիւն եւ կը մաղթենք հեղինակներուն եւ կը յուսանք, թէ այս յօդուածը կարդալով նոր գրիչներ կը յայտնուին, որոնք իրենց վիպակներով պիտի հարստացնեն հայկական պատանեկան գրականութեան գանձարանը:

Վստահելով իմ փորձառութիւններուն՝ դիմում կատարեցի եւ 2005 թուականին ստանձնեցի այդ պաշտօնը»:

2024 թուականին ակադեմիան թենի Մելիտոնեանը նշանակած է «Օսքար»-ի գլխաւոր տնօրէն: Մամուլի մէջ յայտարարուած է այդ բարդ պաշտօնին բազմաթիւ պարտականութիւններու ցանկը, իր հեղինակութիւնը:

Ակադեմիայի գործադիր տնօրէն Պիլ Քրամբը՝ «բարձր գնահատելով Մելիտոնեանի փորձը, ստեղծագործական անհատականութիւնը ու հեռանկարային ըլլալը», կարեւորած է այս պաշտօնը, յատկապէս «Օսքար»-ի 100-րդ մրցանակաբաշխութեան ընդառաջ:

Մեծարգոյ գլխաւոր տնօրէն Թենի, գովասանքներու եւ գնահատանքի խօսքերը բաւարար չեն արժեւորելու համար քո իրագործումները: Երջանիկ եւ հպարտ եղիր, որ կրցար իրականացնել ազնուական ծնողներուդ երազը՝ ըլլալու յաջողած անձնաւորութիւն: Սիրով եւ յարգանքով՝ Ենովք:

Մարմնամարզութեան Աշխարհի Գաւաթ. Արթուր Դաւթեանը՝ Ոսկէ, Վահագն Դաւթեանը՝ Պրոնզէ Սետալակիրներ



Գերմանիոյ Քոթայուս քաղաքին մէջ կատարուած սպորտային մարմնամարզութեան աշխարհի գաւաթի երկրորդ փուլին Հայաստանի հաւաքականի առաջատար, աշխարհի ու Եւրոպայի ախոյեան, Ոլիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր Արթուր Դաւթեանը ոսկէ մետալ նուաճեց՝ յենացատկի վարժութեան եզրափակիչին հաւաքելով 15.100 կէտ:

Հայաստանի հաւաքականի միւս ներկայացուցիչ Վահագն Դաւթեանը դարձած է օղակներու վարժութեան պրոնզէ մետալակիր: Դաւթեանը 14,600 կէտ հաւաքած է եւ կանգնած պատուոյ հարթակի երրորդ աստիճանին:

Այս վարժութեան Հայաստանի հաւաքականի միւս անդամ Արթուր Աւետիսեանը 14.566 կէտով զբաղեցուցած է 4-րդ հորիզոնականը:

Աշխարհի գաւաթի փուլերը վարկանիշային են Փարիզի 2024 թուականի Ոլիմպիական խաղերուն մասնակցելու համար:

«Լիվերփուլ» Նուաճեց Անգլիական Լիկայի Գաւաթը

«Լիվերփուլը» նուաճեց ֆութպոլի Անգլիական լիկայի գաւաթը: Լոնտոնի «Ուեսթհեմը» մարզադաշտին վրայ տեղի ունեցած եզրափակիչ խաղին գերմանացի Եուրկեն Կլոպի գլխավորած խումբը 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց Լոնտոնի «Չելսիին»:



Հիմնական ժամանակը աւարտեցաւ հաւասար՝ 0:0: Առաջին խաղակէսին «Չելսի» անգլիացի յարձակող Ռահիմ Ստերլինգը գրաւեց մրցակիցի բերդը, սակայն VAR-ը ցոյց տուաւ խաղէն դուրս վիճակ: Երկրորդ խաղակէսին խաղէն դուրս վիճակի պատճառով չարձանագրուեցաւ «Լիվերփուլի» հոլանտացի պաշտպան Վիլմի ֎ան Տեյքի կողմ:

Երկարաձգուած ժամանակին «Լիվերփուլի» յաղթական կողմ նշանակեց Տան Դեյքը: Ան մրցակիցի բերդը գրաւեց 118-րդ վայրկեանին:

«Մանչեսթեր Սիթի» Յաղթական

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան 26-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթեր Սիթիին» հիւրընկալեց «Պորնմուտին»:

Միակ կողմ 24-րդ վայրկեանին նշանակեց անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոտսենը:

«Մանչեսթեր Սիթիին» 59 կէտով երկրորդն է եւ առաջատար «Լիվերփուլին» հետ է 1 կէտ:

«Ինթեր Մայամին» Խուսափեցաւ Պարտութենէն Մեսիի Կոլի Շնորհիւ

Հիւսիսամերիկեան ֆութպոլային ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան երկրորդ հանգրուանին «Ինթեր Մայամին» հիւրընկալուեցաւ «Լոս Անճելոս Կեյթսիին» կողմէ: Հիւրերը պարտութենէն խուսափեցան աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսիի կոլի շնորհիւ՝ 1:1:



75-րդ վայրկեանին հանդիպման Ոլիմպիական բացաւ «Լոս Անճելոս Կեյթսիին» սերւոյ յարձակող Տէեան Յովելիչը:

Մեսիի պատասխան կողմ նշանակեց աւելացուած երկրորդ վայրկեանին սպանացի պաշտպան Ժորտի Ալպայի փոխանցումէն յետոյ:

«Ինթեր Մայամին» 4 կէտով Արեւելեան քոնֆերանսի առաջատարն է:

Պասքէթպոլի Հայաստանի Հաւաքականը Յաղթեց Ալպանիային



Պասքէթպոլի Աշխարհի 2027 թուականի առաջնութեան նախընտրական առաջին փուլի ընթացքին պասքէթպոլի Հայաստանի ազգային հաւաքականը երկրորդ հանդիպումը կատարեց: Կարէն Դեմիրճեանի անուան Մարգահամերգային համալիրին մէջ Հայաստանի ընտրանին 84:79 արդիւնքով յաղթեց Ալպանիայի հաւաքականին:

Հանդիպման ամենարդիւնաւէտ խաղացողը Հայաստանի հաւաքականի ներկայացուցիչ Անտրէ Սպայթ Մկրտչեանն էր (17 կէտ):

2027 թուականի աշխարհի առաջնութեան ընտրական նախնական փուլի առաջին խաղի ընթացքին ազգային խումբը Փետրուարի 22-ին արտագնայ խաղին 91:106 արդիւնքով պարտուած էր աւստրիացիներէն:

Յաջորդ հանդիպումը Հայաստանի հաւաքականը կը կատարէ Նոյեմբերի 24-ին՝ հիւրընկալելով Աւստրիոյ ընտրանուն:

«Ինթերի» Յաղթանակը՝ 4:0

Իտալիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին առաջատար «Ինթերը» հիւրընկալեց «Լեչէին» եւ առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:



Իտալացի Սիմոնէ Ինճագիի գլխավորած խումբէն տուպլի հեղինակ դարձաւ աշխարհի ախոյեան Արժանթինի հաւաքականի յարձակող Լաուտարո Մարթինեսը: Աչքի ինկան նաեւ իտալացի կիսապաշտպան Տալիտէ Ֆրատեզին եւ հոլանտացի պաշտպան Ստեֆան Տէ Վրեյը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը «Ինթերի» հիմնական կազմին մէջ էր: Ան 63-րդ վայրկեանին զգուշացուեցաւ դեղին քարտով եւ մէկ վայրկեան ետք փոխարինուեցաւ:

25 խաղէն յետոյ «Ինտերը» 66 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Թուրինի «Յուււստուսէն» (26 խաղ): «Լեչէն» 14-րդն է՝ 24 կէտ:

«Ռեալը» Յաղթեց «Սեւիլիային» Սողիչի Կոլին Շնորհիւ

Սպանիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին առաջատար «Ռեալը» Մատրիտի մէջ մրցեցաւ «Սեւիլիայի» հետ: Իտալացի Քաւլօ Անչելոտիի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:

Միակ կողմ 81-րդ վայրկեանին նշանակեց խորուաթ կիսապաշտպան Լուկա Մորդրիչը, որ կողմէն 6 վայրկեան առաջ մուտք գործած էր դաշտ՝ որպէս փոխարինող:

Արքայական խումբը 65 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Պարսելոնային»:

«Պարսելոնան» Պարտութեան Մատնեց «Խետաֆէին»՝ 4:0

Սպանիոյ առաջնութեան 26-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Խետաֆէին» հետ: Սպանացի Չաւիի գլխավորած խումբը յաղթեց 4:0 արդիւնքով:

«Պարսելոնան» 57 կէտով երկրորդն է, «Խետաֆէն» 10-րդ տեղն է՝ 34 կէտ:

«Պայրընի» Յաղթանակը, Հարի Քեյնի Տուպլը

Գերմանիոյ Պոլնտեսլիկայի առաջնութեան 23-րդ հանգրուանին ախոյեան «Պայրընը» Միլնիսենի մէջ ընդունեց «ՌԲ Լայպցիկին» եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով:

«Պայրընի» խումբին երկու կողմերը նշանակեց անգլիացի յարձակող Հարի Քեյնը:

Միլնիսի «Պայրընը» 53 կէտով երկրորդն է եւ առաջատար «Լիվըրքուսէն» ետ է 8 կէտ: